

ՄԱՐԶԻԿ

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت


marzig

SPORTS MAGAZINE

31րդ ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 6 (360) - VOL. XXXI N° 6 السنة الحادية الثلاثين - العدد السادس



ԱՌՈՅԳ ԵՒ ԿԱՅՏԱՌ
ՇԱՐՔԵՐԸ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ



**ՄԻԿ ԱՐԾԱԹ, ԵՐԿՈՒ ՊՐՈՆՋ ՄԵՏԱԼՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆ ԳՐԱԻԵՑ ԼՈՆՏՈՆԻ
ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ 60-ՐԴ ԴԻՐՔԸ**

Հայկական եռագոյնը երեք անգամ ծածանեցաւ Լոնտոնի ողիմպիականին: Յանկալի էր անշուշտ, որ եռագոյնին հետ «Մեր հայրենիք»-ը եւս հնչէր Լոնտոնի մէջ, սակայն մէկ արծաթ եւ երկու պրոնզ մետալներով Հայաստան բաւարարուեցաւ ողիմպիականին 60-րդ դիրքը գրաւելով:

Հայաստանին արծաթ եւ պրոնզ մետալներ ապահովեցին յունահռոմէական ոճի ըմբիշներ Արսէն Ջուլֆալակեան (74 քկ.) եւ Արթուր Ալեքսանեան (96 քկ.), իսկ երկրորդ պրոնզ մետալին արժանացաւ ծանրաբարձ Յոփսիմէ Խուրշուտեան (75 քկ.):

Սարգստերներ շատ աւելի մեծ ակնկալութիւններ ունէին Լոնտոն մեկնած հայրենի մարզիկներէն, որոնք նախորդ ողիմպիականին, Փեքինի մէջ, յաջողած էին տիրանալ վեց պրոնզ մետալներու (ծանրաբարձներ Տիգրան Գ. Մարտիրոսեան, Գեորգ Դաւթեան եւ Տիգրան Վ. Մարտիրոսեան, կռիվամարտիկ Հրաչեայ Ջաւախեան, յունահռոմէական ոճի ըմբիշներ Եւրի Պատրիկեւ եւ Ռոման Ամոյեան): 2004-ին, Հայաստան ձեռնունայն վերադարձած էր Աթէնքի ողիմպիականէն, իսկ 2000-ին հազիւ պրոնզէ մետալի մը տիրացած էր (ծանրաբարձ Արսէն Մելիքեան):

Լոնտոնի ողիմպիականին Հայաստան ներկայացաւ 24 հոգինոց մարզական պատուիրակութեամբ մը, որուն անդամները 10 մարզաձեւերու մէջ փորձեցին իրենց երկրին համբաւ ապահովել, իսկ իրենց ժողովուրդին՝ յաղթանակի բերկրանք:

Ստորեւ՝ Լոնտոնի ողիմպիականին մասնակցած հայրենի մարզիկներուն անունները, ըստ իրենց կիրարկած մարզաձեւին:

●**ՃԻԻՏՕ**

Յովհաննէս Դաւթեան (60 քկ.)
Արմէն Նազարեան (66 քկ.)

●**ՄԱՐՄՆԱՄԱՐՁ**

Արթուր Դաւթեան

●**ՀՐԱՉԳՈՒԹԻՒՆ**

Նորայր Բախտամեան (10 մ. եւ 50 մ. օդամղիչ ատլը-ճանակ)

●**ԼՈՂ**

Անահիտ Բարսեղեան (100 մ. թիկնալող)

Սիքայէլ Քոլոյեան (100 մ. ազատ լող)

●**ԾԱՆՐԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ**

Առաքել Սիրգոյեան (69 քկ.)
Տիգրան Մարտիրոսեան (77 քկ.)
Արա Խաչատրեան (85 քկ.)
Նորայր Վարդանեան (94 քկ.), 11-րդ դիրքը գրաւած:

Մելինէ Տալուզեան (60 քկ.)
Հռիփսիմէ Խուրշուտեան (75 քկ.), պրոնզէ մետալի արժանացած:

●**ՀԵՌԱՑԱՏԿ**

Վարդան Փահլեւանեան
Արսէն Սարգսեան

●**ՅՈՒՆԱՅՈՒՄԵԱԿԱՆ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏ**

Յովհաննէս Վարդերեսեան (66 քկ.)
Արսէն Ջուլֆալակեան (74 քկ.), արծաթէ մետալի արժանացած:

Արթուր Ալեքսանեան (96 քկ.), պրոնզէ մետալի արժանացած:
Եւրի Պատրիկեւ (120 քկ.)

●**ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏ**

Միհրան Ջաբուրեան (55 քկ.)
Հաճիմուրատ Նուրմոհամետով
Դաւիթ Սաֆարեան (66 քկ.)

●**ՆԻՉԱԿ ԱՐՉԱԿԵԼ**

Քրիստինէ Յարութիւնեան
Մելիք Ջանոյեան

●**ԹԵՔՈՒԱՆՏՕ**


Արման Երեմեան (80 քկ.), չորրորդ հանդիսացած:

Յայտնենք, որ Լոնտոնի 30-րդ ողիմպիականին առաւելագոյն թիւով մետալները «հնձեց» Մ. Նահանգներ՝ 104 մետալ (46 ոսկի, 29 արծաթ, 29 պրոնզ): Անոր ետին երկրորդ եւ երրորդ դիրքերը գրաւեցին Չինաստան՝ 88 մետալ (38 ոսկի, 27 արծաթ, 23 պրոնզ) եւ Մեծն Բրիտանիա՝ 65 մետալ (29 ոսկի, 17 արծաթ, 19 պրոնզ):



Թիւիւն հիւժերը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
مارزیک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهولمتن الرياضي



Մարզական ամսաթերթ
Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

31ՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 6 (360)

ԽՄԲԱԳԻՐ
Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Սեդա Պէշլեան (Լիբանան),
Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
(Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
Պատրիկ Կիւլպէնկեան, Գրիգորիս
Պողարեան, Աբօ Մոսիկեան
(Լիբանան), Յարութ Մատենլեան
(Արեւմտեան Մ. Նահանգներ),
Զարեհ Տերվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure Paklayan
Կողմի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
Պուրծ Համուտ, Եհնիշեանի Թաղ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 01/248043, Fax: 01/260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
հատավաճառի սակն է 4000 լ.ո.:
Տարեկան բաժանորդագրութեան սակ
ճշդուած է 48000 լ.ո.:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:
Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ
(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
եւ Եւրոպական երկիրներ \$70,
Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



Հ.Մ.Ը.Մ. ՀԱԼԷՊ ՊԱՏՆԵՇԻ ՎՐԱՅ

Հակառակ Սուրիան հարուածող քաղաքական եւ ապահովական լուրջ ցնցումներուն, Հալէպէն ստացուած տեղեկութիւնները կը հաստատեն, որ ինչպէս հալէպահայութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ընտանիքը եւս ցարդ զերծ մնացած են նիւթական կամ մարդկային մեծ վնասներէ:

Հալէպի դէպքերուն ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ականներ մարդասիրական օրինակելի քայլով մը սնունդ բաժնած են քաղաքի արաբ բնակիչներուն: Անոնք կազմակերպած են

նաեւ մաքրութեան արշաւ մը՝ փողոցներու կուտակուած աղբերը մաքրելով:

Միւս կողմէ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ ներկայացուցիչը սկստակական կեդրոնական յանձնախումբին մօտ՝ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Հալէպէն, իր մասնակցութիւնը բերած է Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 6-րդ համագումարին եւ անոր հետեւած կեդրոնական յանձնախումբի աշխատանքային նիստերուն, որոնք տեղի ունեցած են 20-24 Օգոստոսին, Հայաստան:

ՄԱՀԱԶԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի երկարամեայ եւ վաստակաշատ անդամներէն, «Արժանեաց» շքանշանակիր եւ Կեդրոնական Վարչութեան նախկին եղբայրներէն՝

ԳԵՈՐԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 9 Օգոստոս 2012-ին, Հալէպի մէջ:



Խ
Ն
Բ
Ա
Գ
Ն
Ն
Ա
Ն
Ն

ԶԱՐԻՔԻՆ ԱՐՄԱՏԸ

Գրեթե ծանօթ ճշմարտություն է, որ մենք անհատաբար արժեք ներկայացնող մարդիկ շատ ունինք:

Կեանքի բոլոր մարզերուն մեջ առաջնակարգ ու տաղանդաւոր դէմքեր շատ ունինք: Հայ թէ օտար շրջանակներու մեջ յաջողած անունները բազմաթիւ են: Անձնաւորութիւններ, որոնք յարգանք կը պարտադրեն, համբաւ կը վայելեն: Ուժ են, իբրեւ բարոյական հեղինակութիւն կամ նիւթական կարելիութիւն:

«Ես»երով կը փայլինք, սակայն իբրեւ «Մենք» տժգոյն ենք: «Արեւ»ներ ու «աստղ»եր կան հայկական երկնակամարին վրայ, բայց պայծառ ու լուսաւոր չէ հայ կեանքը:

Կը հպարտանանք անհատական արժանիքներով ու յաջողութիւններով աչքի զարնող հայերու ի տես, սակայն երբ հայութեան կը նայինք՝ տխուր ու մտահոգիչ շատ բան կը գտնենք, Հայաստան թէ Սփիւռք:

Այլ խօսքով, ուժեր ունինք, բայց ուժեղ չենք:

Այս երեւոյթը հետեւանք է մեր ժողովուրդի ապրած դարաւոր պայմաններուն: Հնագոյն դարերէն մինչեւ նորագոյն տարիներ հայութեան հողին ու կեանքին բռնացող ուժեր, զայն աջէն ու ձախէն շրջապատող հոսանքներ ո՛չ միայն անկարելի դարձուցած են ազգային հաւաքական մտածողութեան մը զարգացումը, այլեւ ընդհակառակն՝ բթացուցած են հայութեան ազգ ըլլալու գիտակցութիւնը:

Այս կացութեան մեջ, հայ մարդոց ջախջախիչ մեծամասնութիւնը մղուած է տեւական արտագաղթով «*իր գլխուն ծարին նայելու*», անհատական միջոցներով *իր* կաշին փրկելու, անձնական նախաձեռնութեամբ *իր* ինքնութիւնը պահպանելու ճիգին: Այս ընթացքով ալ հաւաքական մտածողութիւն եւ համընդհանուր կազմակերպումի փորձ

գրեթե գոյութիւն ունեցած չէ, մինչեւ Ազգային Զարթօնքի եւ Յեղափոխութեան շրջան:

Այսպէս, բացառութեամբ 1870-1920 յիսնամեակին, մեր ժողովուրդը անհատապաշտական իր գիծը պահած է հայ կեանքի բոլոր մարզերուն մեջ, հանրայինէն մինչեւ համազգայինը:

Այսօր, անկախ պետականութեան պայմաններուն մեջ, դժբախտաբար ան կը շարունակէ վարանում եւ ընկրկում ցոյց տալ հաւաքական ուժ դառնալու ստիպողութեան դիմաց, երբ անգամ մը եւս չի յաջողիր անհատական իր ուժերէն եւ անձնական արժեքներէն համահայկական ուժականութիւն ստեղծել:

Իրականութիւնները դառն են, բայց իրականութիւն ըլլալէ չեն դադրիր: Արդարեւ՝

Որքան կը շեշտուին հայ մարդոց նիւթական բարօրութեան ձգտումը եւ անհատական ապահովութեան ծիգերը այնքան կը տկարանայ ազգային մտածողութիւնը:


Որքան կը ցրուի մեր ժողովուրդը սփիւռքեան հեռաւոր ափերու վրայ այնքան կը տկարանայ ազգային ինքնութեան գիտակցութիւնը:

Որքան արտաքին ազդակներ աննրպաստ անդրադարձ կ'ունենան ազգային գոյատեւումի մեր ծիգերուն վրայ, այնքան քաղքենիացումը եւ այլասերումը կը դառնան անխուսափելի:

Ու ճիշդ հո՛ս է ազգային-միութենական դաստիարակութեան դերը հայ մարդուն ճանաչողութեան եւ հաւաքական աշխատանքի վարժողութեան մեջ: Եւ եթէ այսօր բացայայտ է մեր տկարութիւնը այս մարզին մեջ՝ պատճառը տեւական զարգացումն ու ծաւալումն է անհատապաշտական մեր ձգտումներուն, ինքնագոհութեան եւ անտարբերութեան:

Ահա թէ ուր փնտռել շարիքին իսկական արմատը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱՎՆԵՐ ԵՒ ՅՈՒՇԵՐ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի 100-ԱՄԵԱԿԷՆ



Հրաչ Տեր Սարգիսեան
ՄՈՆԹՐԵԱԼ



Բարսեղ Օհանեան
(1874-1951):

Մեր ազգային-միութենական կեանքէն ներս թուականներ կան, որոնք պէտք է առնուին շրջանակի մէջ, չմոռցուին եւ հանգամանորէն յիշատակուին իրենց ատենին: Անոնցմէ է 1 Օգոստոս 1912-ը, «Կամք մարմնամարզական ակումբ»ի հիմնադրութեան օրը: Արդարեւ, 2012 թուականը կը զուգադիպի «Կամք»ի հիմնադրութեան 100ամեակին:

«Կամք»ի հիմնադրութեան մասին, Հ.Մ.Ը.Մ-ի քառասնամեակին (1918-1958) նուիրուած «Յուշամատեան»ին մէջ կը կարդանք:

«Պօղոսեան Ազգ. վարժարանի մեծանուն տնօրէնը՝ Աղազար եւ իր պաշտօնակից համայնարանաւարտ ու մանկավարժ ուսուցչական կազմը ստեղծած էին արդէն զարթօնքի շրջան մը: Բազմաթիւ այլ հրատարակութիւններու կարգին, կանոնաւորաբար կը ստացուէր հայ մարմնակրթանքի ռասփիրայ Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ» հանդէսը, որ մեծապէս կը խանդավառէր երիտասարդութիւնը:

«1910-ին, վարժարանին մարզանքի ուսուցիչ կը նշանակ-

ուի փրոֆ. Արթիւր Էլմաս (Իզմիրէն) եւ այդ թուականին է որ մարմնակրթանքի հանդէպ հետաքրքրութիւնը թափ կ'առնէ երիտասարդութեան մէջ ու զգալի կը դարձնէ մարզարան մը ունենալու պահանջը: Այդ պահանջին ուժ կու տան նոյնինքն տնօրէն Աղազար եւ ուսուցչական կազմը, սակայն ցաւալի պարագաներու հարկադրանքին տակ անոնց մեկնումը պատճառ կ'ըլլայ որ գործնական աշխատանքները կ'իսաւարտ մնան: Այս աշխատանքը սակայն որոշ չափով կը շարունակուի շնորհիւ մարզիչ Ստեփան Խանճեանի, որ կը կազմակերպէ հեծելանիւի արշաւ եւ կու տայ հայկական առաջին երկսեռ մարզահանդէսը՝ 1912-ին, Պօղոսեան վարժարանին մէջ, ուր ներկայ կ'ըլլայ նաեւ Շաւարշ Քրիսեան:

«Դպրոցի նեղ շրջափակէն ներս խմորուող մարմնակրթանքը պէտք եղած բաւարարութիւնը չէր տար մարզասէր երիտասարդութեան ու ժողովուրդին, հարկ էր դուրս գալ այդ շրջափակէն ու մարմնակրթանքի զաղափարականը ժողովրդականացնել: Այս ընելու համար պէտք էր, կարիքը կար ուժեղ անհատականութիւն ունեցող անձի մը որ բարեբախտաբար գտնուեցաւ յանձին Բարսեղ Օհանեանի: Ազգային զօրեղ նկարագրով օժտուած Օհանեան լաւագոյն անձն էր, որովհետեւ ան նոյն ատեն կը վայելէր լայն ժողովրդականութիւն: Իրեն կը միանան նոյն զգացումներով ու զաղափարներով տոգորուած քսանութր երիտասարդներ եւ հաւաքաբար դիմում կը կատարեն այդ շրջանի Աղեքսանդրիոյ Ազգ. Քաղաքական ժողովին՝ պարզելով իրենց ծրագիրը հայկական մարզարան մը հաստատելու մասին: Քաղաքական ժողովը միաձայնութեամբ կ'ընդունի ներկայացուած ծրագիրը եւ զօրավիգ կը կանգնի նախաձեռնող երիտասարդներուն՝ տրամադրելով հայոց եկեղեցիին կից գտնուող ազգապատկան խոպան հողը:

«Ամբողջ վեց ամիս անդուլ աշխատանքէ վերջ, այս գետինը հետզհետէ կը վերածուի ներկայանալի մարզավայրի մը եւ 1 Օգոստոս 1912-ին, հիմնադիր անդամները կը գումարեն իրենց անդրանիկ ընդհանուր ժողովը: Ժողովին նախագահ կ'ընտրուի Քաղաքական ժողովի ատենապետ տոքթ. Միսաք Ժամկոչեան, որուն առաջարկով կը կազմուի վարչութիւն



1916. Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի խորհրդանշան:



1957. Զ.Ս.Ը.Ս.-«Կամք»ի աթլետիկ միությունից անդամների ցուցանակները:

1. Ալեքսան Զայրնայրեան, 2. Զաւէն Բրուտեան, 3. Նուպար Տէյիր-Անճեան, 4. Նուպար Սիսակեան, 5. Մովսէս Կիւլիզեան, 6. Կարապետեան, 7. Գեորգ Զադոյեան, 8. Խաչիկ Շիշմանեան, 9. Յրաչ Տէր Սարգիսեան, 10. Բարսեղ Թելլալեան, 11. Կարօ Զուրիկեան:

մը, բաղկացած՝ Պերճ Օհանեանէ (ատենապետ), Բարսեղ Օհանեանէ (մարզանքի պատասխանատու), Միհրան Թէլեանէ (գանձապահ) եւ Ազնաւորեանէ (ատենադպիր): Ժողովը օրակարգի վրայ կ'ունենայ անմիջական հարցեր - ծրագիր-կանոնագրի մշակում, ընդհ. անդամական ժողով եւ անդամագրութիւն, եւ նկատելով որ այս ձեռնարկը արդիւնքն է նորահաս սերունդին, մարզարանը պիտի կնքուէր «Կամք մարմնամարզական ակումբ» անունով: Այս անունը յղացողը եղած է Շաւարշ Քրիսեան, որ ակադեմիայի ըլլալով հիմնադիրներու զոհողութեան եւ թափած ջանքերուն, թելադրած է մարզարանին տալ «Կամք» անունը, իբրեւ խորհրդանիշ եւ ներշնչման աղբիւր գործող ու գալիք սերունդներուն:

«Կամք»ի առաջին ընդհանուր անդամական ժողովը կը գումարուի 1912-ին, որուն կը մասնակցին յիսուն երիտասարդներ: Այս ժողովին ընթացքին կը վաւերացուի ծրագիր-կանոնագիրը ու կը յղուի Ազգ. Քաղաքական ժողովին՝ առ ի վաւերացում:

«1915 Մայիս 18-ին, հիմը կը դրուի տարիներէ ի վեր փայփայուած երազի մը - Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան: Այս շարժման նախաձեռնողը կ'ըլլայ Աղեքսանդրիոյ Ազգ. Քաղաքական ժողովը:

«10 Մայիս 1916-ին այս երկու կազմակերպութիւնները միանալով կը կազմեն ամբողջ-

ջութիւն մը «Կամք» Մարմնամարզական ակումբ եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւն անուան տակ:

«Կամք»ի հայ հետազօտիչները 1936-ին կապուած են Հայ Արիներու Փարիզի կեդրոնին եւ նոյն տարին մասնակցած են սկաուտական միջազգային ճամբարին»:

«Կամք»ը ունի հպարտալի վաստակով հարուստ պատմութիւն: «Կամք»ի հիմնադիրները ճամբայ ելան մարմնակրթանքն ու սկաուտութիւնը կազմակերպութեան մը մէջ միացրելու գաղափարով, պատրաստելու համար տիպար քաղաքացիներ, առողջ, մաքուր եւ անխարդախ նկարագրի տէր հայեր, ծառայելու համար ազգին ու հայրենիքին:

100-ամեայ «Կամք»ի պատմութիւնը հարուստ եղաւ բացառիկ սխրագործութիւններով: Իր մարզական եւ սկաուտական բնագաւառները, շնորհիւ նուիրեալ ղեկավարներու փաղանգի մը, տարիներու ընթացքին որդեգրեցին բարեւաւման եւ այժմէականացման ուղին, ի խնդիր երիտասարդներու եւ պատանիներու յառաջդիմութեան: Ան միշտ պատնէշի վրայ ըլլալով՝ չգոհացաւ միայն կապ պահելով եգիպտահայ մարզական միութիւններու հետ, կազմակերպելով միջ-քաղաքային մարզական մրցաշարքեր, այլ նաեւ՝ մասնակցեցաւ օտարազգի բարձր մակարդակի ակումբներու



1952. Զ.Ս.Ը.Ս.-«Կամք»ի պասքեթպոլի խումբի անդամները:
 1. Ծոնի Ունճեան, 2. Գօգօ Գարապօղոսեան, 3. Ծործիաննի, 4. Պօղոս Կիւպէշեան, 5. Կարապետ Կանիմեան, 6. Աւետիս Կանիմեան, 7. Պետրոս Ոսկանով, 8. Աբրահամ Արծրունեան, 9. Սարգիս Թապագեան, 10. Յրայր Խաչատուրեան, 11. Պերճ Թոսունեան, 12. Եղուանդ Ֆրունճեան:

կազմակերպած մրր-
ցումներուն՝ միշտ
ձեռք բերելով պատ-
ւարեր արդիւնքներ:

Կարծես ղեռ երէկ
էր: Պատանեկան շրր-
ջանի յիշողութեանս
մէջ կը պատկերանան
դաստիարակ վարիչ-
ներս, մարզիչներս ու
խմբապետներս,
որոնք իրենց թանկա-
գին ժամերն ու անվե-
րապահ գուրգուրան-
քը կը մատուցէին
մեր Ֆիզիքական,
բարոյական եւ ազ-
գային դաստիարա-
կութեան համար:

Անոնք եղան միութե-
նական մաքուր մի-
ջավայրի ղեկավար-
ներ, ուր հայերէն խո-
սիլը, կարգապահու-
թիւնն ու յարգանքը
անվիճելի եւ էական
պահանջներ էին:

Անոնք էին՝ Նշան Գրիգորեանը, Կարօ Քի-
փէլեանը, Վահան Գաւուքճեանը, Արամայիս Հոխիկեանը,
Արիս Քիփէլեանը, Գրիգոր Մալեգեանը, Յարութիւն Մատթէ-
ոսեանը... Բիւ՛ր յարգանք այս արժանաւոր ղեկավարներուն,
որոնք դաստիարակեցին սերունդ մը՝ մարդկային, ազգային
եւ միութենական արժէքներով:

Յիշողութեանս մէջ տակաւին թարմ է, թէ ինչպէս, որպէս
Պօղոսեան Ազգ. վարժարանի աշակերտ, պարտաւորութիւն
ունէինք ամէն Կիրակի ներկայ գտնուելու եկեղեցւոյ ժամեր-
գութեան: Հակառակ մեծամասնութեան դժգոհանքին, մենք
«Կամք»ի պատանիներս այնքան ալ չէինք դժգոհեր, ընդհա-
կառակը՝ անհամբեր կը սպասէինք Պատարագի աւարտին,
որպէսզի գէթ կէս ժամուան համար, նախքան տուն վերա-
դառնալը, վազէինք «Կամք»ի մարզադաշտը, եկեղեցւոյ կից,
եւ հիացումով դիտէինք «Կամք»ի միջազգային չափանիշով
մարզիկներուն փորձերը, որոնք պատիւ կը բերէին հայ անու-
նին եւ վարկին: Անոնցմէ կ'արժէ յիշել Պերճ Տէրտէրեանը,
Արմենակ Ալաճաճեանը, Երուանդ Բարմաքսրզեանը, Պերճ
Թոսունեանը, Կարպիս Ափրիկեանը, Զաւէն Բրուտեանը,
Արամ Սարգիսանը եւ ուրիշներ:

«Կամք»ի մարզիկներէն Պերճ Տէրտէրեանի 1 քայլ ոստու-
մի 7.10 (1950-ին) եւ Արամ Սարգիսեանի՝ ձող նետելու - 3.70
(1959-ին) իրագործումները մինչեւ օրս չեն գերազանցուած եւ
Հ.Մ.Ը.Մ-ի կայքէջի (www.homenetmen.org) մարզական բաժ-
նին մէջ կը յիշուին որպէս Հ.Մ.Ը.Մ-ական մրցանիշներ:

1960-ական թուականներու սկիզբը, Եգիպտոսէն ծայր
տուած զանգուածային արտագաղթը Գանատայի ափերը



1956. Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչական եղբայրներ ընդհանուր ժողովի
մը ընթացքին: Զախէն աջ՝ Բիւզանդ Սուրատեան, Նշան Գրիգորեան,
Մարտիրոս Շատախցեան, Վազգէն Եսայեան, Յակոբ Տէր Պետրոսեան:
Նստած, ձախէն աջ՝ Սկրտիչ Յոխիկեան (ընդհանուր ժողովի քար-
տուղար), Լեւոն Արփիարեան (ընդհանուր ժողովի ատենապետ), Գա-
րեգին Մելքոնեան (Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի նախագահ) եւ Վահան Գաւուքճ-
եան (դիւանի ատենադպիր):

կը հիմնուի Արեւելեան Սիտնիի մէջ, Աղեքսանդրիոյ նախկին
«Կամք»ի անդամներու կողմէ:

Այսօր, Հ.Մ.Ը.Մ-ը եւ «Կամք»ը մէկ ամբողջութիւն են եւ
նոյն ընտանիքի հարազատ անդամներն են՝ «Բարձրացի՛ր-
բարձրացուր» նշանաբանին առաքելութեան ճամբով:

100 տարեկան է այսօր «Կամք»ը. ան փառքով ու պատուով
գրեց սփիւքեան մեր մարզական պատմութեան մէկ պայծառ
էջը:

«Կամք»ի հիմնադրութեան 100-ամեակին առթիւ, Աղեք-
սանդրիոյ եւ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»ի վարչութիւննե-
րը պատշաճ հանդիսութիւններով կը տօնակատարեն 100-ամ-
եայ յորելեանը: Հանդիսութիւնները տեղի կ'ունենան. - Աղես-
քանդրիա՝ 6-10 Սեպտեմբեր, Մոնթրէալ՝ 26-28 Հոկտեմբեր,
2012:

100-ամեակի ոգեկոչում կը նշանակէ յիշել, արժեւորել եւ
գնահատել «Կամք»ի տարիներու նուիրական գործը, իր առա-
քելութիւնն ու ազդեցիկ ներդրումը մեր գաղութներէն ներս:

Այսօր «Կամք»ը անհուն գոհունակութեամբ մաս կը կազ-
մէ Հ.Մ.Ը.Մ-ի հզօր ընտանիքին եւ իր անունը կցած
Հ.Մ.Ը.Մ-ին, Աղեքսանդրիոյ, Մոնթրէալի եւ Սիտնիի մէջ,
կրկնակի պատիւ կը զգայ որ իր անցեալը միշտ կը յիշուի ու
վառ մնայ «Կամք»ով մեծցած եւ դաստիարակուած սերունդի
մը սրտերուն եւ հոգիներուն մէջ:

Բիւ՛ր յարգանք բոլորին՝
Կեցցէ՛ «Կամք»ի 100-ամեակը,
Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը,
Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ-ը:

կը բերէ մեծ թիւով
«Կամք»ի անդամներ,
մարզիչներ, մարզիկ-
ներ, սկաուտներ, ա-
րենոյշներ եւ համա-
կիրներ:

1966 եւ 1974 թուա-
կանները յատկանշա-
կան են «Կամք»ի
պատմութեան մէջ:
Հ.Մ.Ը.Մ. եւ «Կամք»ի
իրենց համապատաս-
խան ընդհանուր ժո-
ղովներուն որոշու-
մով կը միանան եւ
1966-ին կը կազմեն
Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի
Մոնթրէալի եւ 1974-
ին՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»
Աղեքսանդրիոյ Հայ
Մարմնակրթական
Ընդհանուր Միու-
թեան մասնաճիւղեր:

Աւելի ուշ, Հ.Մ.-
Ը.Մ.-«Կամք»ի մաս-
նաճիւղ մըն ալ

ԻՆՉՈՐԻ ՄԿԱՈՒՏ ԲԼԱՎ

(ՀԱՅ ՄԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)



է մարզուի փոքր տարիքէն: Այս հիման վրայ ան մտադրեց Անգլիոյ հասարակութեան բաժնել թերթիկներ, որոնց մէջ ան լաւապէս կը պաշտպանէր իր տեսակէտը:

Այս թերթիկները շատ լաւ ընդունելութեան արժանացան յանձին երիտասարդական կազմակերպութիւններու, որոնց քաջայերանքով Պէյտըն Փաուլը գրեց «Սկաուտին գիրքը»: Այս գիրքը եղաւ սկաուտութեան հիմը ու գլխաւոր ուղեցոյցը հանդիսացաւ շարժումին:

Անմիջապէս սկաուտութիւնը ծայր տուաւ Անգլիոյ մէջ, ծայրագաւառները մինչեւ իսկ: Շուտով ան տարածուեցաւ անգլիական գաղութներուն մէջ ու հետզհետէ աշխարհի բոլոր երկիրներուն մէջ կազմակերպուեցան ըսկաուտական խումբեր: Բնական է, որ հայերը անտարբեր չմնացին ու 1912-ին իսկ ունեցան հայ սկաուտներու կազմակերպութիւնը:

1907-ին Պէյտըն Փաուլը, Պրատենսի կղզիին

մէջ կը կատարէ առաջին բանակումը, որու շնորհիւ սկաուտներու թիւը կը բարձրանայ 100 հազարի: Այսօր այս թիւը հասած է 30 միլիոնի ու սկաուտութեան դիմագիծը նոյնը չէ՝ այն ինչ որ էր ասկէ 40-50 տարի առաջ: Ներկայիս սկաուտը մնալով նոյն վեհանձն, առաքինի ու ծառայող տղան, ունի պատանիի մը փափաքները իրականացնելու բոլոր միջոցները: Այսպէս, ան կը մասնակցի բանակումներու, խմբակային արշաւներու ու հաւաքոյթներու: Աւելին, ան իր գործօն մասնակցութիւնը կը բերէ ձեռային աշխատանքներու շինութեան, ինչպէս կամուրջներու, աշտարակներու եւ այլն:

Իւրաքանչիւր պատանի, որ կ'արձանագրուի սկաուտական խումբի մը, երեք ամսուան պատրաստութեան շրջան մը կ'անցընէ, որմէ ետք կու տայ իր երդումը: Սովորաբար ըսկաուտական երդումը պատանիին համար առաջինն է իր կեանքին մէջ, եւ այս պատճառով ալ իր մէջ կ'արթնցնէ պատասխանատուութեան գիտակցութիւնը. այնպէս է որ ան կ'երդնու հաւատարիմ ըլլալ Աստուծոյ, ծառայել հայրենիքին ու օգնել ուրիշին: Նոյնպէս ան կ'որոշէ հնազանդիլ սկաուտի դաւանանքին ու ասկէ ետք է որ կը դառնայ պաշտօնապէս սկաուտ ու իրաւունք կ'ունենայ կրելու իր տարագը:

Այդ օրէն սկսեալ ան մաս կը կազմէ սկաուտական խումբին ու իր մասնակցութիւնը կը բերէ բոլոր գործունէութեանց. հետզհետէ իր մէջ կը կազմուին պատանիի մը առաքինի յատկութիւնները. գործադրելով աստիճանաւորի հրահանգները, հետեւելով սկաուտութեան նշանբանին, որն է՝

«Սկաուտութիւնը կրթութեան միջոց մըն է, որ կը ձգտի ստեղծել գործունեայ եւ օգտակար քաղաքացիներ»: Այսպէս արտայայտուած է Լորտ Պէյտըն Փաուլը իր իսկ հիմնած շարժումին մասին:

Հիմնադիրին այս քանի մը տողերը կ'ամփոփեն սկաուտութեան իմաստը, նպատակը եւ օգտակարութիւնը: Արդարեւ, սկաուտութիւնը իսկական դպրոց մըն է, որ կը կերտէ ամէն մէկ պատանի սկաուտի նկարագիրը: Անոր կու տայ քաղաքացիական որոշ կրթութիւն, նկարագիրի ու ֆիզիքական տոկունութիւն, ինչպէս նաեւ պարկեշտութիւն ու վեհանձնութիւն: Ան է որ պատանիին մէջ առաջին անգամ ըլլալով կ'արթնցնէ պատասխանատուութեան գիտակցութիւնը եւ անոր տենչանքներն ու խանդը կ'ուղղէ դէպի միասնական բարձր իտէպլի մը ձգտումին: Հետեւաբար, պատանիին մէջ կ'ամրապնդուի անհատականութիւնը ու իր հոգիին մէջ լաւապէս կը մշակուի եղբայրական սէրը:

Ինչպէս յառաջ եկաւ սակայն այս մեծ դպրոցը: Սկաուտութեան հիմնադիրը՝ Լորտ Ռոպըրթ Պէյտըն Փաուլը, այս շարժումին գաղափարը յղացաւ, երբ անգլիական բանակին հետ պատերազմի ճակատ կը գտնուէր: Անգլիացի զօրավարը իր կեանքին մեծագոյն մասը անցուցած էր պատերազմներով ու ականատես եղած էր զինուորներու դժուարութիւններուն գործնական գետնի վրայ: Անոնց մէջ տեսած էր նաեւ կարգապահութեան ու ձեռներէցութեան զգալի պակասը ու այն եզրակացութեան եկած՝ որ ապագայ մարդը պէտք

«Մի՛շտ պատրաստ», ան կը դառնայ հնազանդ ու հետագային պաշտօններ վերցնելով իր մէջ կ'արթնցնէ պատասխանատուութիւնը, գիտակցութիւնը եւ վեհանձնութիւնը: Սկսուտ դառնալով, պատանիին մէջ յառաջ կու գայ նաեւ ինքնավրատահութիւնն ու փորձառութիւնը, ինչպէս նաեւ՝ ֆիզիքական տոկոսնութիւնը: Ըլլալով խմբակի անդամ, ան կը մասնակցի խմբակային բոլոր աշխատանքներուն ու հաճոյքներուն, ըլլան անոնք արշաւներ, մրցումներ կամ բանակումներ: Ընկերակցութեամբ իրենց տարեկից պատանիներու, ան կը մասնակցի բանակումներու, ուր անխուսափելիօրէն կը վայելէ մաքուր օդն ու բնութիւնը: Հոս է որ իր մէջ կու գայ եղբայրական սէրը, որ հետագային մեծ ազդեցութիւն կ'ունենայ իր առօրեայ կեանքին մէջ:

Այս բոլոր միջոցներով սկսուտութիւնը պատանիին կու տայ յաւելեալ դաստիարակութիւն մը, ամբողջացնելով ծնողքին ու դպրոցին գործը: Սկսուտութիւնը արդէն իսկ նկատուած է կրթութեան օժախ պատանիին համար եւ ընդունուած իրականութիւն է, որ ան կը պատրաստէ ապագայ քաղաքացիներ: Այս կէտը նկատի ունենալով, Մ. Նահանգներու նախկին նախագահներէն Ռուզվելթ հետեւեալ արտայայտութիւնը ունեցած է սկսուտութեան մասին.

«Ոչ մէկ մարդ լաւ քաղաքացի է, եթէ չի գործադրել սկսուտական տասնաբանեան եւ անոր ոսկեղէն կանոնագիրը. իր ամբողջ կեանքին ընթացքին ան ուղեցոյց պէտք է ընտրէ այս գեղեցիկ շարժումը»:



'Made from one single slice of natural Australian opal'

Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com

ՆՈՒՒՐՈՒՄԻ ՍԿՁԲՈՒՆՔԸ ՊԱՀՊԱՆԵԼԸ ՄԵՐ ԲՈԼՈՐԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ Է

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ
ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ
ԵՂԲ. ՅՈՎՍԷՓ ՏԷՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Բաֆֆի Սիլահեան
ՀԱԼԷՊ



«Մարզիկ»ի ընթերցողներուն ի՞նչ-պէս կը ծանօթացնէք դուք ձեզ:
- Ծնած եմ Հալէպ, 1933 թուականին: Նախնական ուսումս ստացած եմ Ազգ. Կիւլպէնկեան վարժարանը: 1949-ին նետուած եմ գործի ասպարէզ, իսկ 1965-էն ետք զբաղած եմ վաճառականութեամբ: Ամուսնացած եմ 1960-ին եւ ունիմ երկու զաւակ՝ Մանօ եւ Թալին:

Ի՞նչպէս մուտք գործած էք Հ.Մ.Ը.Մ.ի շարքեր:
- Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մաս կազմեցի 1948-ին: Անդամակցեցայ սկաուտական «Կռունկ» խումբին, որուն խմբապետն էր եղբ. Սարգիս Պապօղլեանը: Սկաուտական շարքերէն հասայ Վարիչ Առաջնորդի աստիճանին: Մարզական կեանքին մէջ մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի աթլէթի խումբին եւ մասնակցած եմ երկար վազքի մրցումներու: Մաս



1990. եղբ. Յովսէփ համա-Հ.Մ.Ը.Մ.ական երրորդ խաղերու առաջնութեան տիրացած Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի պասքէթպոլի տղոց խումբին հետ:

կազմած եմ նաեւ քաղաքի բաժնի սկաուտական Ֆուլթպոլի «Անդրանիկ» խումբին:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ վարած էք զանազան պաշտօններ: Կրնա՞ք մեզի ամփոփ տեղեկութիւններ փոխանցել Հ.Մ.Ը.Մ.ականի ձեր կեանքէն:
- Պատիւը ունեցած եմ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ վարելու վարչական զանազան պաշտօններ: Երկար ժամանակ եղած եմ Ֆուլթպոլի յանձնախումբի անդամ եւ որոշ շրջան մը ստանձնած եմ երեք խումբերու պատասխանատուութիւնը. «Մասիս», «Նժդեհ» եւ կրտսերներ: Եղած եմ Հ.Մ.Ը.Մ.ի վարչական, իսկ քանի մը շրջան ալ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային վարչութեան անդամ:



Եղբ. Յովսէփ Ֆուլթպոլի երեք խումբերու պատասխանատու:

Իբրեւ պատասխանատու, Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն հետ ներկայ գտնուած եմ տարբեր մրցաշարքերու, որոնց կարեւորագոյնը համա-Հ.Մ.Ը.Մ.ական երրորդ

խաղերն են, որոնք Ապրիլ 1990-ին տեղի ունեցան Վալանսի մէջ: Հալէպի տղոց պասքեթպոլի խումբը տիրացաւ այդ խաղերուն առաջնութեան: Մենք յաջողեցանք յաղթել Հ.Մ.Ը.Մ.ի Մ. Նահանգներու տղոց հօր խումբին եւ տիրացանք առաջնութեան բաժակին:



Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը նկարուած Կեդրոնական Վարչութեան անդամներու հետ:

Դուք ապրած էք միութեան մարզական կեանքի փառքի օրերը: Այժմ ի՞նչպէս կ'արժեւորէք արհեստավարժութեան ներկայութիւնը մարզական կեանքին եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.էն ներս:

- Շատ կը ցաւիմ, երբ կը տեսնեմ որ նիւթականը հետաքրքրութեան գլխաւոր տեղը կը գրաւէ այսօրուան մարզիկներուն մտքին մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը հիմնուած է եւ տարիներու ընթացքին գործած է անսակարկ ծառայութեան գիտակցութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ը զարգացած է կամաւոր եւ անձնագորհ անդամներու ճիգերով: Ուստի, նուիրումի սկզբունքը պահպանելը մեր բոլորին եւ ի մասնաւորի հաւատաւոր միութենա-

երը Դամասկոսի մէջ յաջողեցանք պարտութեան մատնել «Պարատա» ակումբը եւ տիրացանք ախոյեանութեան բաժակին:

Ի՞նչպէս կ'ուզէք եզրափակել ձեր խօսքը:

- Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներուն պիտի բաւարարուիմ ըսելով «Բարձրացիր-բարձրացուր»:

կաններու պարտականութիւնն ու պարտաւորութիւնն է: Ճիշդ է, որ մարզական կեանքին մէջ այսօր նիւթականը գրաւած է առաջին դիրքը եւ դարձած է վաճառականութեան միջոց մը, իսկ մարզանքը՝ պարզապէս արհեստ մը, բայց Հ.Մ.Ը.Մ.ին համար ան եղած է եւ պէտք է մնայ սուրբ գործունէութիւն:

Յիշատակելի ի՞նչ դէպք կը յիշէք անցեալի օրերէն:

- Ինձի համար յիշատակելի դէպք է Հ.Մ.Ը.Մ.ի խումբին Սուրիոյ նախագահի բաժակին տիրանալը: Երբեք չեմ մոռնար,


ARMENIA
for private and group trips
www.saberatours.fi

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS


Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա

Photos: © Yann Artius-Bertrand / La Terre vue du ciel. Licence 075 960031 Studio YCKE 2005 P&P



- 11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com
- 48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com
- 67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr
- 32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ 2014-Ի ՄՈՆՏԻԱԿԻ ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ



Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

2 014-ի Մոնտիակի գտումի մրցումները կը սկսին 7 Սեպտեմբեր 2012-ին: Հայաստանի ազգային խումբը, Բիսմակին մէջ գտնուելով, մրցակիցներ ունի Իտալիան, Դանիան, Չեխիան, Պուլկարիան եւ Մալթան:

Հինգերորդ անգամ ըլլալով Հայաստան կը մասնակցի աշխարհի ախոյեանութեան գտումի մրցումներուն: Իւրաքանչիւր մրցաշարքի մասնակցութեան, հայրենի կազմին արդիւնքներուն մէջ կը նկատուի որոշ յառաջդիմութիւն: Վերջին գտումի մրցումներուն ան պիտի յաջողէր հասնիլ փլէյ-օֆի մրցումներուն: Իսկ նախորդ չորս մասնակցութիւններուն, Հայաստան պիտի կատարէր 42 մրցում: Պիտի յաղթէր 4 մրցում եւ նշանակէր 30 կոլ:

Հայրենի կազմին բերդապահութիւնը տակաւին կը վստահելի Ռոման Պերեզովսկիի: Ան կը նկատուի փայլուն բերդապահ մը, եւ յետսպահ գիծի մարզիկները աւելի հանգիստ մրցում կը կատարեն անոր հետ:

Յետսպահ գիծի ամէնէն փորձառուն արդէն «ծերացած» Սարգիս Յովսէփեանն է: Հակառակ իր յառաջացած տարիքին, ան կը մնայ յետսպահ գիծին սիւնը: Յովսէփեան 129 անգամ կրած է ազգային խումբին շապիկը: Անոր անմիջական օգնականը նոյնպէս փորձառու Ռոպէրթ Արզուման-

եանն է: 27 տարեկան այս մարզիկը 52 անգամ կրած է ազգային խումբին շապիկը եւ կը նկատուի հաւաքականին հիմնական տարրերէն մէկը: Մնացեալ յետսպահները բաւական երիտասարդ ու խոստմնալից են: Լեւոն Հայրապետեան, Հրայր Մկոյեան եւ Արտակ Ետիկարեան պիտի ամբողջացնեն պաշտպանողականը:

Միջնապահ գիծի ալֆան ու օմեկան Հենրիխ Մխիթարեանն է: Ան հետզհետէ աւելի ու աւելի ինքզինք կը փաստէ թէ՛ իր կազմին Շախթիոր Տոնեցքի հետ եւ թէ՛ ազգային խումբին հետ: Հենրիխ խաղ դեկավարող, փոխանցումներ կատարող ու կոլ նշանակող մարզիկ է: Ան հայ-

կական ֆուլթայլի անցեալի փառքերը յիշեցնող մարզիկներու փաղանգին կը պատկանի: Անոր օգնականներն են Գէորգ Ղազարեան, Արթիւր Ետիկարեան, Կարլէն Մկրտչեան եւ Դաւիթ Մանոյեան: Բնականաբար մեծ յոյսեր կապուած են նաեւ նախապէս Այաքսի մաս կազմած եւ ներկայիս Կուպան Կրասնոտարի մաս կազմող Արագ Օզպիլիզի: Արագ փայլուն միջնապահ մըն է եւ, անկասկած, իր կարեւոր ներդրումը կ'ունենայ ազգային խումբին յաջողութիւններուն մէջ:

Յառաջապահ գիծի կարեւորագոյն մարզիկը Մարքոս Փիցելլին է: Ան 22 մրցումներու ընթացքին նշանակած է 7 կոլ: Անոր կողքին կը մնան Եուրա Մովսիսեանը եւ Էտկար Մանուչարեանը: Եուրա աւելի յաջող ելոյթներ կ'ունենայ եւ միշտ ալ նկատի կ'առնուի մարզիչին կողմէ:

Մարզիչ Վարդան Մինասեանի հետ Հայաստանի ազգային խումբը ցարդ կատարած է 26 մրցում, յաղթած է 9 մրցում, հաւասարած է 2 մրցում եւ պարտուած է 15 մրցում: Մինասեան յաջողած է կազմել ներդաշնակ խումբ մը, որուն յաջողութեան գաղտնիքը եւ ուժականութիւնը միջնապահ գիծն է: Վարդան Մինասեան յաջողած է Հենրիխ Մխիթարեանն ու Գէորգ Ղազարեանը իրենց ճիշդ պարտականութեան վրայ գետեղել, ու առաւելագոյնս օգտագործել անոնց հնարաւորութիւնները: Նախապէս իբրեւ մարզիկ միջնապահ դիրքի խաղացած ըլլալով, մարզիչ Մինասեան հասկցած է միջնապահներուն դերակատարու-

Թիւնը եւ խումբին յաջողութեան գաղտնիքը:

Եթէ զանց առնենք բերդապահ Պերեզովսկին ու Սարգիս Յովսէփեանը, ապա Հայաստան կը նկատուի երիտասարդ կազմ մը: Ան ունի բաւական զօրաւոր մրցակիցներ: Եւրոպայի փոխ ախոյեան Իտալիա խմբակին գլխաւոր յաւակնորդն է: Չեխիա, որ բաւական լաւ կազմ մը ունի, պիտի փորձէ առաջին երկու դիրքերէն մէկը գրաւել: Դանիա նոյնպէս լաւ կազմ ունի, եւ վաշքինկները միշտ ալ ի վիճակի են անակնկալներ ստեղծելու: Պուլկարացիք վերջին տարիներուն այնքան ալ փայլուն չեն, սակայն կը մնան դժուար մրցակիցներ: Մինչ մալթացիք կը մնան անորոշ կազմ մը, որ սակայն վերջին տարիներուն ոչինչ կրցած են ընել:

Մասնագէտներ կը նշեն, որ Հայաստանի ազգային կազմը գտումի մրցաշարքի ամէնէն անակնկալ կազմերէն մէկը կր-



Յենրիխ Մխիթարեան (աջին) միջազգային մրցումի մը ընթացքին:

7-ին Մալթայի մէջ, իրենց առաջին մրցումով, պէտք է ապացուցեն որ սխալիւր արգիլուած է ու ամբողջ հայ ֆուտպոլասէր հասարակութիւնը կը հետեւի իրենց յաղթանակներուն:

նայ ըլլալ: «Եուրօ 2012»-ի գտումի մրցումներուն հայրենի մարզիկները ներկայացուցին զեղեցիկ ֆուտպոլ եւ արձանագրեցին աննախընթացօրէն դրական արդիւնքներ: Այս մրցումներուն յոյսին տակ կը ըստատուի որ անոնք նոյն մակարդակի եւ նոյն դրական արդիւնքներով ելոյթներ ունենան եւ յաջողին նուաճում մը կատարել հայկական ֆուտպոլի պատմութեան մէջ:

Մարզիչ Վարդան Մինասեան եւ իր տղաքը կը գիտակցին այս պարտականութեան եւ Սեպտեմբեր

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԽԱՐԴՆԵՐ 37-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԳՕՏԵՊՆԴԵՑԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Մարտ Բէշիշեան
Լեկարները՝ Պերճ ճամճեանի
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Երբ, 7 Յուլիս 2012-ի
կէս գիշերին, բազմա-
հազար Հ.Մ.Ը.Մ. ասէր-
ներու մասնակցու-
թեամբ, «Պրըմիէնկամ
Հայ Սքուլ»-ի շրջափակէն ներս, տօնա-
կան ուրախ մթնոլորտի մէջ իրենց փայ-
լուն աւարտին հասան Արեւմտեան Մ.
Նահանգներու շրջանի Նաւասարդեան
37-րդ մարզախաղերը:



հիւ հայութեան սիրտին մէջ կը գտնուի:
Մարզախաղերուն փակման հանդի-
սութիւնը տեղի ունեցաւ Երբ, 7
Յուլիսի երեկոյեան ժամը 6:30ին, «Պրը-
միէնկամ Հայ Սքուլ»-ի Փուլիպոլի մար-
զադաշտին վրայ, մեծ թիւով Հ.Մ.-
Ը.Մ. ասէրներու եւ համակիրներու ներ-
կայութեան: Հանդիսութիւնը սկսելէ
առաջ մարզադաշտ ժամանող հանդի-
սատեսներուն հանելի ժամանց ընծայեց
երգիչ Յարութ Յակոբեան հրամցնելով
ուրախ երգերու փունջ մը:
Այնուհետեւ, հերթաբար մարզա-
դաշտ առաջնորդուեցան օրուան պաշ-
տօնական հիւրերը, որոնցմէ ոմանք
չնորհաւորական ելոյթներ ունեցան եւ
բարձր գնահատեցին Նաւասարդեան
մարզախաղերու նախաձեռնութիւնը:
Ելոյթ ունեցան քոնկրէտականներ Պրետ
Շրրմըն եւ Հաուըրտ Պրըմըն, Լոս Անճե-
լիսի քաղաքապետական խորհուրդի ան-
դամ Փօլ Գրիգորեան, Գալիֆորնիոյ
նահանգային խորհրդարանի թեկնա-
ծուներ Կրէյկ Գրիգորեան եւ Էտրին Նա-
պարեան:

ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱԶԴԱՆՇԱՆԸ

Հանդիսութիւնը սկիզբ առաւ ժամը
7-ին: Երջանային սկաուտական եւ մար-
զական խորհուրդի անդամներու առաջ-
նորդութեամբ, մարզադաշտ մուտք
գործեցին Արեւմտեան Թեմի Առաջնորդ
Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.Ը.Մ. Ի
Նաւասարդեան 37-րդ մարզախաղերու
պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Գա-

գիկ եւ Մատինէ Գէորգեաններ, «Տի-
պար Հ.Մ.Ը.Մ. ակաճ»-ը քոյր Մարտ
Բէշիշեան, Հ.Մ.Ը.Մ. Ի Նաւասարդեան
35-րդ մարզախաղերու պատուոյ նա-
խագահ Ճորճ Ժամկոչեան եւ Հ.Մ.Ը.Մ. Ի
Երջանային Վարչութեան կազմը:
Օրուան խօսնակներն էին վաստա-
կաշատ Հ.Մ.Ը.Մ. ակաճներ Սիւզի Օհան-
եան (հայերէն) եւ Արման Գիլիքեան
(անգլերէն), որոնք տողանցող մասնա-
ճիւղերը ներկայացնելէ բացի ներկանե-
րը ոգեւորեցին Հ.Մ.Ը.Մ. Ի հարազատ
պատկերը ներկայացնող եւ յատկապէս
Նաւասարդեան մարզախաղերու 37 տա-
րիներու յաջողութիւնները ընդգծող
զեղեցիկ խօսքերով:
Ձեռնարկին հանդիսավարութիւնը
կատարեց Նաւասարդեան մարզախա-
ղերու կազմակերպչական աշխատանք-
ներուն մէջ մեծ ներդրում ունեցող եղբ.
Սեւակ Կարապետեանը, որ առաջին հեր-
թին հրաւիրեց ներկաները վայրկեան մը
յոտնկայ լուծեամբ յարգելու յիշա-
տակը մեզմէ առ յաւիտ բաժնուած բո-
լոր Հ.Մ.Ը.Մ. ակաճներուն եւ յատկա-
պէս վերջերս մահացած Երջանային
Վարչութեան անդամ քոյր Ռիմա Արե-
դի-Սաղրեանին: Ապա ան ներկայացուց
օրուան պաշտօնական հիւրերը:

ՀԻՒՐԵՐԸ

Հանդիսութեան հիւրերու կարգին
էին, վերոյիշեալ անուններէն բացի, Հա-
յաստանի գլխաւոր հիւպատոս Գրիգոր
Յովհաննիսեան, Հ.Մ.Ը.Մ. Ի Կեդրոնա-
կան Վարչութեան անդամ եղբայրներ
Յակոբ Թիւֆէնքեան, Վիգէն Դաւթեան
եւ Վիգէն Քոթեան, Հ.Յ.Դ. Արեւմտե-
ան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի
ներկայացուցիչ Գօգօ Թոփալեան, Հայ
Դատի յանձնախումբի ատենապետուհի
Նորա Յովսէփեան, ՀՕՄ-ի Երջանային
Վարչութեան ատենապետուհի գոկտ-
նայիրի Տէրտէրեան, Ազգային Վարչու-
թեան փոխ ատենապետ Ճորճ Զորպա-
եան, Գալիֆորնիոյ նահանգի վերահս-
կիչ Ժան Չիանկ, Լոս Անճելիսի քաղա-
քապետական խորհուրդի անդամ Տեմիս
Զէյն, յանգ. (controller) Ռիմոնի Կրուր
եւ իրաւաբան Գարմէն Թուրթանչի,
Փաստօրէնայի քաղաքապետական խոր-
հուրդի անդամ Քրիս Հոլտըն, Պրըպէն-
քի քաղաքապետական խորհուրդի ան-





դամ ձեռի թալամանթեզ, Լոս Անճելլոսի ոստիկանական բաժանմունքի հրամանատարներ ձորճի Վիլեկաս, Քրիս Փիթ-չըր եւ Ժան Իգան, Գալիֆորնիոյ Նահանգային խորհրդարանի անդամ Մայք Կաթոյի ներկայացուցիչ Նայրի Մանուկեան, վերահսկիչ (supervisor) Մայք Անթոնովիչի ներկայացուցիչ Ռիթա Հաճիմանուկեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ, պատուոյ նախագահներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, հիւրեր, ծնողներ եւ բազմահարիւր Հ.Մ.Ը.Մ.ականներ ու համակիրներ:

ԲԱՐԻ ԳԱՆՈՒՍԻ ԽՕՄԲԸ ԵՒ ԴՐՈՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ապա, եղբ. Կարապետեան բարի գալուստ մաղթելով բոլորին՝ կեդրոնացաւ Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպման եւ արձանագրած յաջողութիւններուն վրայ, որոնք անսահման ժամերու աշխատանքի արդիւնք են եւ ի դորձ կը դրուին Հ.Մ.Ը.Մ-ի բազմաթիւ կամաւորներու եւ պաշտօնէութեան կողմէ: Ան իր գոհունակութիւնը յայտնեց, որ երիտասարդութիւնը կը մասնակցի աւանդութիւն դարձած այս մարզախաղերուն եւ անոր հպարտանքը կ'ապրի:

Հանդիսավարին խօսքերէն ետք տեղի ունեցաւ դրօշակի տպաւորիչ արարողութիւնը: Չորս անկարգելներով երկիրքէն իջան Մ. Նահանգներու, Հայաստանի, Գալիֆորնիոյ եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները՝ մեծ հետաքրքրութիւն ստեղծելով ներկաներուն մօտ:

Շրջանային խմբապետուհի քոյր Ալին Կարապետեանի հրահանգով, շրջանի արի-արեւոյճներէ կազմուած դրօշակակիրներու խումբը, Շրջանային Վարչութեան շեփորախումբի ազգայնաշունչ եղանակներով, հպարտութեամբ մարզադաշտ ներկայացուց Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Գալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Նաւասարդեան դրօշները, բարեւեց պատուոյ հիւրերուն եւ սկստական տիպար կեցուածքով դարձեալ հետեւեցաւ Շրջանային Վարչութեան շեփորախումբին նուագած Մ. Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներուն, որոնց աւարտին դրօշակները խորիտ քայլ-



ածքով տեղադրուեցան բեմահարթակին վրայ:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՄԲԸ

Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան: Ան առաջին հերթին երախտագիտութիւն յայտնեց ներկաներուն, որոնց աջակցութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ին հանդէպ ցուցաբերած հաւատքին շնորհիւ, յաղթական տարի մը եւս բոլորեց Հ.Մ.Ը.Մ-ը: Եղբ. Աբրահամեան բախտաւորութիւն նկատեց տէր եւ տիկ. Գաբրիլ եւ Մատինէ Գէորգեաններու նման ազգանուէր պատուոյ նախագահ, ու Մարթ Քէշիշեանի նման նուիրեալ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մը ունենալուն համար՝ հաստատելով: «Այսօր համախմբուել ենք մեր երիտասարդութեան յաղթանակներով հպարտանալու, որոնց իրականացման համար լայն ժամանակ, կամաւոր աշխատանք եւ մարդու է տրամադրուել: Մենք հպարտ ենք մեր երիտասարդութեամբ: Հ.Մ.Ը.Մ-ի շարքերում տիրող միջնորդող մաքուր, առողջ ու ապահով է, որի հետեւանքով, տարուէ տարի աճում են մեր շարքերը, շատանում են մեր համակիրները»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ը իր անդամներուն երկրորդ ընտանիքը նկատելով, եղբ. Աբրահամեան շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, իրենց վստահութեան համար, եւ եզրակացուց՝ շնորհակալութեամբ: «Մենք եւս վստահում ենք ձեզ եւ հաւատքով շարունակելու ենք ազգանրպաստ մեր գործունէութիւնը, յանուն

մեր սերնդների հայեցի դաստիարակութեան, յանուն մեր ազգի միասնականութեան եւ մեր անկախ հայրենիքի հզօրացման»:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՄԲԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորական ելոյթ ունեցաւ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան, որ ամբողջական փայլող աստղի նրմանցներով Հ.Մ.Ը.Մ-ը՝ ընդգծեց: «Կարելի չէ պահ մը կանգ չառնել եւ չհիանալ այն պանծալի դրօշին, որուն ներքեւ համախմբուեցան հազարաւոր հայորդիներ՝ ո՛չ միայն ողջունելու դաշտերու վրայ պարզուող նուաճումները, այլ նաեւ ըմբոշինելու ազգային արժանապատուութիւնը հաստատող եւ մեր



ժողովուրդի հաւաքական կամքը խորհրդանշող այս մեծ յաղթանակը: Պատիւ Հ.Մ.Ը.Մ-ը սիրող ու յարգող մեր ժողովուրդին, որուն շնորհիւ այսքան մեծ յաջողութեամբ պսակուեցաւ Նաւասարդեանի ազգային այս համախմբումը: Պատիւ բազմահարիւր կամաւորներուն՝ Հ.Մ.Ը.Մ.ական եւ համակիր, որոնք ճիշդ չինայեցին ապահովելու համար այս մեծ նախաձեռնութեան յաջողութիւնը»:

Եղբ. Թիւֆէնքճեան ուրախութեամբ յայտարարեց Հ.Մ.Ը.Մ-ի 103-րդ մասնաճիւղին հիմնումը Լիբանանի մէջ, ինչպէս նաեւ Հ.Ղ. Սփիւռքի նախարարութեան հայապահպանման ծիրէն ներս նշանակալի աւանդ նուաճած կազմակերպութեանց մրցոյթին՝ Հ.Մ.Ը.Մ-ի շրջաններու յաջողութիւնները՝

գրաւելով առաջին երեք դիրքերը:

Եզրակացնելով, եղբայրը յատուկ շնորհակալութիւններ յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան, որուն «նախաձեռնութեամբ եւ վերահսկողութեամբ անգամ մը եւս մեծ յաջողութեամբ պսակուեցան Նաւասարդեան խաղերը: Պատիւ բոլորին՝ անխտիր, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ ծնողներ, վարչականներ, յանձնախումբեր, անդամներ եւ ծնողներ: Զեր յաջողութեանց դափնեպսակը հանդիսացող Նաւասարդեան այս խաղերը թող գօտեպընդեն ու լիցքաւորեն ձեզ՝ նուաճելու աւելի մեծ բարձունքներ եւ մարտահրաւէրներ»:

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՕՄԲԸ

Հայրական իր օրհնութիւններով եւ շնորհաւորութիւններով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքն ու Հ.Մ.Ը.Մ.ասէր ազգակիցները ողջունեց Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը, որ արձանագրուած Նաւասարդեան յաղթանակները «յանուն Հ.Մ.Ը.Մ-ին, շնորհիւ Հ.Մ.Ը.Մ-ին եւ ի պատիւ սիրելի Հ.Մ.Ը.Մ-ին» բնորոշելով՝ ազնիւ մրցակցութիւն որակեց ընթացած մրցումները, որոնք անկասկած անջնջելի յիշատակներ ձգած են մրցող պատանիներուն եւ երիտասարդներուն մօտ, ապա ըսաւ: «Ամիսներ շարունակ, գտումի ու աւարտական մրցումներով, ձեր ծնողներուն ու հարազատներուն հետ միասին մաս կազմեցիք միջնորդաւ մը, որ կը կոչուի Հ.Մ.Ը.Մ.ական մրցակցութիւն. այս միջնո-

ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ՄԱՐԶԱՆԱԴԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՌՈՐՈՒՄԸ

Ստորեւ՝ Նաւասարդեան 37-րդ մարզախաղերու ընդհանուր դասաւորումը: Ախոյեանութեան բաժակները նուիրած էին Պետրոս Աբփոլաթի յիշատակին, հանգուցեալին կնոջ՝ Էտնայի եւ զակին՝ Ալեքի փափաքով:

- ԹՆՆԻՍ
1. «Արարատ» մասնաճիւղ
 2. «Սասուն» մասնաճիւղ

- ՓԻՆԿ-ՓՈՆԿ
1. «Արարատ» մասնաճիւղ
 2. «Սիփան» մասնաճիւղ
 3. «Սասուն» մասնաճիւղ

- ԼՈՂ
1. «Մասիս» մասնաճիւղ
 2. «Սիփան» մասնաճիւղ
 3. «Անի» մասնաճիւղ

- ԹԵԹԵՒ ԱԹԼԵԹ
1. «Մասիս» մասնաճիւղ
 2. «Արագած» մասնաճիւղ
 3. «Ազատամարտ» մասնաճիւղ

- ՎՈՒՒՊՈՒ
1. «Մասիս» մասնաճիւղ
 2. «Արարատ» մասնաճիւղ

- ՖՈՒԹՊՈՒ
1. Լոս Անճելլոսի մասնաճիւղ
 2. «Մասիս» մասնաճիւղ
 3. Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ

- ՊԱՔԵԹՊՈՒ
1. «Արարատ» մասնաճիւղ
 2. Լոս Անճելլոսի մասնաճիւղ
 3. «Ազատամարտ» մասնաճիւղ



լորտը միասնաբար կ'ապրինք ամէն տարի, Նաւասարդեան խաղերուն առիթով: Նաւասարդեան խաղերը մեր հայրենական ու վաղեմի ականդութեանց հաւատարմութեամբ, նոր տարուան ու նոր կեանքի յաղթանակ կը բերեն բոլորիս՝ մրցողներուն, պատասխանատուներուն ու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ



շահուած իւրաքանչիւր յաղթանակ, ցնծութեան ու հպարտութեան առիթ է բոլորիս համար»:

Առաջնորդ հօր խօսքով՝ Նաւասարդեան այս հանդիսութեամբ «անգամ մը եւս կը յիշենք ու կը յիշեցնենք, թէ հայկական այս միջնորդութեան մերն է, Հ.Մ.Ը.Մ.ը մերն է ու մենք պիտի մնանք մեծ ընտանիքի կողքին, որ կը կոչուի հայութիւն՝ Հայաստանով, Արցախով, Զաւախքով ու Սփիւռքով իրարու միացած»:

Ողջունելով տարուան պատուոյ նախագահն ու տիպար Հ.Մ.Ը.Մ.ականը՝ Առաջնորդը խրախուսեց Հ.Մ.Ը.Մ.ականները իրենց երթը շարունակել Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ, եւ եզրակացուց՝ ըսելով. «Քալեցէք խրոխտ, հայու անունն ու վարքը բարձր բռնեցէք, մանաւանդ Եռագոյնը՝ մեր անկախութեան ու ազատութեան խորհրդանիշը: Լա՛ւ գիտցէք, որ երէց սերունդի աչքերը ուղղուած են ձեզի. հպարտ ենք ձեր յաղթական երթով ու այս փառաւոր տողանցքով, եւ մեր սպասումն է որ դուք շարունակէք ձեր երթը, մինչեւ որ Հ.Մ.Ը.Մ.ի ու հայկական դրօշները ծածանին մեր բոլոր հողերուն վերեւ, Արարատի գագաթին՝ իրականացնելով մեր դարաւոր երազները»:

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ

Շահեկան ու խրախուսիչ պատգամներու փոխանցումներէն ետք, որոտըն-

դոստ ծափողջոյններու ներքոյ սկիզբ առաւ անհամբերութեամբ սպասուող Նաւասարդեան տողանցքը՝ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին հրամցուցած ազգայնաշունչ եւ ոգեւորիչ քայլեղանակներով խանդավառ:

Ընդհանուր խմբապետուհի քոյր Թալին Հինտոյեանի հրահանգով սկիզբ առաւ շքերթը: Մեծապէս տպաւորիչ էին տողանցքին սկիզբը քալող այն նախկին Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք քաղաքացիական իրենց պարտականութիւնը կատարելով՝ քաջաբար կռուած էին Աֆղանիստանի եւ Իրաքի մէջ, յաղթահարելով պատերազմի դժուարին պայմանները: Պատուոյ հարթակին առջեւ, Շրջանային Վարչութիւնը, առ ի գնահատանք անոնց մատուցած ազգային ծառայութեան, յատուկ յուշատախտակով մը պարգեւատրեց իւրաքանչիւրը: Այսպէս՝ պարգեւատրուեցան Ռոպէրթ Ասատրեանը, Արմէն Պապասլուբեանը, Սարգիս Պոյաճեանը, Գարո Քրիթիքաշեանը, Յովիկ Մարկոսեանը, Ժան Մերկէօրեանը եւ Արա Թամամեանը:

Այնուհետեւ տողանցեց շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, նորագոյն «Զաւախք» մասնաճիւղէն մինչեւ շրջանի առաջին եւ հիմնադիր Լոս Անճելլոսի մասնաճիւղը: 18 մասնաճիւղերն ալ Հ.Մ.Ը.Մ.ականի ինքնավստահութեամբ քալեցին, բարեւեցին պատուոյ հիւրերուն ու զիրենք խրախուսող ծովածա-

ւայ բազմութեան, ապա գրաւեցին իրենց նշանակուած տեղերը մարզադաշտին վրայ:

Տողանցքի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի եւ Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղերը յատուկ նուէրներով գնահատեցին պատուոյ նախագահն ու տիպար Հ.Մ.Ը.Մ.ականը, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելլոսի մասնաճիւղը ոչ միայն հպարտութեամբ բարեւեց ներկաներուն, այլ նաեւ՝ իր երկար տարիներու

անդամ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական-2012» տիտղոսին արժանացած քոյր Մարո Քէչիշեանը շնորհաւորական յուշատախտակով մը գնահատեց՝ միաժամանակ անոր նկարը կրող շնորհաւորական հսկայ պաստառ մը ներկայացնելով մարզադաշտ:

ԲԱԺԱԿՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄԸ

Այնուհետեւ, Նաւասարդեան մարզախաղերու գլխաւոր առանցքը հանդիսացող մարզական մրցումներու ախոյեանութեան բաժակները յանձնուեցան յաղթող մասնաճիւղերուն: Բաժակները, Շրջանային մարզական խորհուրդի անդամներու օգնութեամբ, յանձնեցին պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Գագիկ եւ Մատինէ Գէորգեանները, տարւան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» քոյր Մարո Քէչիշեանը, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեանը, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանը, մարզական պատասխանատու եղբ. Ալեք Արարատեանն ու Նաւասարդեանի պատասխանատու եղբ. Վիգէն Տագէսեանը:

Պաշտօնական յայտագիրի աւարտին, մարզադաշտին վրայ ծածանող դրօշը վար առնուեցաւ, եւ, Ընդհանուր խմբապետուհի քոյր Թալին Հինտոյեանի ձեռամբ, ըստ ականդութեան, նուիրուեցաւ պատուոյ նախագահին:

ՃԱՆՉՆԱՆՔ

**ՆԱԲԱՍԱՐԳԵԱՆ 37-ՐԴ
ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ
ՆԱԽԱԳԱՀ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԱԳԻԿ
ԵՒ ՄԱՏԻՆԷ ԳԷՈՐԳԵԱՆՆԵՐ**

Նաբասարգեան 37-րդ մարզախաղերը վայելեցին տեր եւ տիկին Գագիկ եւ Մատինէ Գեորգեաններու պատուոյ նախագահութիւնը: Գագիկ Գեորգեան նախագահն է Հայ Ոսկերիչներու Միութեան եւ «Estet Jewelry House»-ին: Աւելի քան 30 տարիներ գոհարեղէնի արդիւնաբերութեան մարզէն ներս ծառայելով՝ ան արձանագրած է բացառիկ յաջողութիւններ եւ արժանացած է համաշխարհային ճանաչման:

Գագիկ Գեորգեան ծնած է Հայաստանի մայրաքաղաք Երեւան, ուր նաեւ հասակ նետած է ուսում ստացած է: Շատ փոքր տարիքէն սկսած է աշխատելու իր հօրեղբօր՝ Երեւանի գոհարեղէնի աշխատանոցը: 1977-ին սկսած է յաճախել գոհարեղէնի գոլէժի ձեւաւորման եւ ադամանդ տաշելու բաժանմունքը: Աւելի ուշ, ան անդամակցած է Հայաստանի արուեստի հիմնարկին՝ իբրեւ ձեւաւորող:

Հայկական գոհարեղէնի աւանդութիւններուն արդէն իսկ ծանօթ Գեորգեան, իր մարզէն ներս աւելի մասնագիտանալու համար, 1979-ին կը փոխադրուի Մոսկուա, ուր կը դիմագրաւէ նոր իրականութիւններ, կը յաղթահարէ իր դէմ ցցուած դժուարութիւնները, յաջողութեան կը հասնի՝ ստեղծելով իր պայծառ ապագան:

Արդէն ինքնավստահ իր արհեստին մէջ, Գագիկ, իբրեւ մասնագէտ ձեւաւորող եւ ոսկեայ նուրբ գործերու նորոգող, կը միանայ Խորհրդային Միութեան Արւեստի հիմնարկին: Մոսկուայի մէջ ան շուտով մեծ յաջողութիւններու կը հասնի եւ 1991-ին կը հիմնէ իր առաջին անձնական ընկերութիւնը՝ «Estet Jewelry House»-ը, ապա՝ ընտանեկան փոքր գործարան մը, ուր տաղանդաւոր ոսկերիչներ կը ստեղծագործեն գոհարեղէնի իրենց գեղեցկագոյն նորաձեւութիւնները: Աւելի ուշ, այս գործարանը կը հանդիսանայ «Estet» վաճառանիշը, որուն վրայ կեդրոնանալով՝ Գագիկ արագօրէն կը հմտանայ գոհարեղէնի ճարտարութեան բոլոր գաղտնիքներուն: Այսօր, ընկերութիւնը Եւրոպայի գոհարեղէնի ճարտարարուեստի մեծագոյն կեդրոններէն մէկն է:

Իր կենսագրութեան նոր եւ հետաքրքրական էջը կը բացուի 2009-ին, երբ Ռուսիոյ մէջ ան կը հիմնէ եւ կը նախագահէ Հայ Ոսկերիչներու Միութիւնը: Երկու



տարիներու պաշտօնավարութեան ընթացքին կարող առաջնորդ մը հանդիսանալով՝ ան կը յաջողի մարդիկ համախմբել իր գաղափարներուն շուրջ: 2011-ին միջազգային Հայ Ոսկերիչներու Միութեան նախագահը դառնալով՝ կը սկսի իր ծրագիրները ի գործ դնել:

Իր ղեկավարութեան ընթացքին կը սկսի հրատարակութիւնը Հայ Ոսկերիչներու Միութեան միջազգային պարբերականին, իսկ 2011-ին, Հիմնարկութիւնը յաջող ցուցահանդէս մը կը կազմակերպէ Երեւանի մէջ, ինչ որ երկար տարիներու երազն էր Հայ Ոսկերիչներու Միութեան անդամներուն: Հայ ոսկերիչներու նոր հիմնարկութիւններ կը բացուին Հայաստանի, Չեխիոյ, Ռուսիոյ, Պելձիքայի, Միացեալ Արաբական Էմիրութիւններու եւ Արժանօրէնի մէջ: Կը բացուի հիանալի կայքէջ մը, որ հաղորդակցութեան միջոց մը կը հանդիսանայ աշխարհի հայ ոսկերիչներու բոլոր հիմնարկութիւններու անդամներուն:

Գոհարեղէնի դպրոցին բացումը իր կեանքի կարեւորագոյն ծրագիրներէն մէկն էր, զոր կարճ ժամանակի մէջ իրականութիւն կը դարձնէ: Իր գլխաւորութեամբ, Դեկտեմբեր 2011-ին, Հայ Ոսկերիչներու Միութեան առաջին դպրոցը կը բացուի Մոսկուայի մէջ եւ այնուհետեւ, այս տարի, երեք այլ դպրոցներ՝ Արցախի, Երեւանի եւ Լոս Անձելըսի մէջ:

Իբրեւ հայ՝ Գագիկ միշտ ցանկացած է օգտակար հանդիսանալ իր հայրենիքին: Այսօր, Հայ Ոսկերիչներու Միութիւնը աշխատանք կը տանի ստեղծելու ազատ տնտեսական գօտի մը Հայաստանի մէջ: Ան խորապէս կը հաւատայ, որ հայեր միասնաբար կրնան յաջողիլ եւ ծաղկիլ:

Գագիկ Գեորգեան ամուսնացած է եւ ունի երկու զաւակ՝ Գայիանէ եւ Էդուարդ: Կինը՝ Մատինէ Պապայեան ծնած է հասակ նետած է Երեւանի մէջ, ուր նաեւ յաճախած է տեղւոյն արուեստի գոլէժը, ուրկէ վկայուելէ ետք՝ 1981-ին, ամուսնացած է Գագիկի հետ: Մինչեւ 1999 թուական Մոսկուա ապրելէ ետք՝ փոխադրուած է Լոս Անձելըս:



ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 37-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՄՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Կիրակի, 1 Յուլիս 2012-ի երեկոյեան, «Շունիվորսը Հիլթըն» պանդոկի սրահը աւելի քան հինգ հարիւր Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու ժամադրաւայրը դարձաւ. անոնք հաւաքուած էին տօնախմբելու հազարաւոր մարզիկ-մարզիկուհիներու Նաւասարդեան յաղթանակները:

Ժամը 7-8, ընկերային ժամէն եւ յիշատակի նկարներ նկարուելէ ետք, մասնակիցները ոգեւորութեամբ սրահ մուտք գործեցին եւ գրաւեցին իրենց տեղերը:

Ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին անունով հիւրերը ողջունեց եւ ձեռնարկի հանդիսավարութիւնը կատարեց եղբ. Շանթ Հայթայեան: Ներկայներուն բարի գալուստ մաղթելէ ետք, ան հրաւիրեց զանոնք յոտնկայս ունկնդրելու Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները, զորս հմայիչ ձայնով երգեցին Լարա Ղարիպեան եւ արեւոյշ-խմբապետուհի Իվոնա Գրիգորեան:

Այնուհետեւ սեղանները օրհնեց, Նաւասարդեան մարզախաղերուն բարի երթ մաղթեց եւ պատուոյ նախագահն ու տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը շնորհաւորեց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Առաջնորդ հայրը նաեւ ընթերցեց Արամ Ա. Հայրապետին օրհնագիրը, որ ուղղուած էր Նաւասարդեան 37-րդ մարզախաղերու յաջողութեան:

Ընթրիքի դադարին ցուցադրուեցան երկու տեսերիզներ: Առաջինը կը ներկայացնէր Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերուն պատմականը եւ անոր արձանագրած յաջողութիւնները, իսկ երկրորդը՝ պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Գագիկ եւ Մատինէ Գէորգեաններու կենսագրական գիծերը եւ կեանքի ասպարէզէն ներս արձանագրած յաջողութիւնները: Տեսերիզները մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին ներկայներուն մօտ:

ՊՐԵՏ ՇԸՐՄԸՆԻ ԵՒ ՏԵՆԻՍ ԶԷՅՆԻ ԵԼՈՅԹՆԵՐԸ

Ընթրիքէն ետք գործադրուեցաւ պաշտօնական յայտագիր մը, որուն առաջին բաժինով բեմ հրաւիրուեցաւ քոնկրէսական Պրետ Շըրմըն, որ շնոր-

հաւորելով Նաւասարդեան մարզախաղերուն յաջողութիւնները, առ ի գնահատանք՝ Սպիտակ Տան վրայ ծածանած ամերիկեան դրօշ մը եւ համապատասխան հաստատագիրը յանձնեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանին: Իր սրտի խօսքը փոխանցեց նաեւ Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Տենիս Զէյն:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԻՒՐԵՐԸ

Այնուհետեւ, եղբ. Հայթայեան ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Լոս Անճելըսի մօտ Հ.Հ. գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Յակոբ Թիւֆէնքճեան եւ Վիգէն Դաւթեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Հ.Մ.Ը.Մ.ական Գօգօ Թովիպեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, Գայիֆօրնիոյ նահանգային խորհրդարանի թեկնածու Ատրին Նազարեան, անցեայի պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին արժանացած քոյր-եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային



Ձախին՝ պատուոյ նախագահ Գագիկ Գեորգեան: Կեդրոնը՝ Առաջնորդ Սուլշեղ Արք. Մարտիրոսեան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին օրհնագիրը կը յանձնէ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանին: Աջին՝ առ ի գնահատանք Նաւասարդեան մարզախաղերու, բոնկրեսական Պրետ Շըրմըն Սպիտակ Տան վրայ ծածանած ամերիկեան դրօշ մը եւ համապատասխան հաստատագիրը կը յանձնէ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանին:

յանձնախումբերու եւ մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներ եւ բազմաթիւ այլ հիւրեր: Ան յատուկ շնորհակալութեամբ ներկայացուց նաեւ ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին կազմը:

Հիւրերուն մէջ ակնյայտ էին ծանօթ ոսկերիչներ, որոնք եկած էին յարգելու իրենց անդամակցած Հայ Ոսկերիչներու միութեան ատենապետը, որ պաշտօնապէս պիտի ստանձնէր Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահի պատասխանատուութիւնը:

Հ.Մ.Ը.Մ. Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց Նաւասարդեան աշխատանքներու պատասխանատու եղբ. Վիգէն Տազէսեան: Ներկաները ողջունելէ ետք, եղբ. Տազէսեան բարի գալուստ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքի նորագոյն անդամներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Գագիկ եւ Մատինէ Գէորգեաններուն եւ շնորհաւորեց տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» քոյր Մարօ Քէշիշեանը:

Նաւասարդեան մարզախաղերու յաջողութիւնները մատնանշելով՝ եղբ. Տազէսեան վստահեցուց, թէ անոնք արդիւնք են Հ.Մ.Ը.Մ.ականներու, կամա-

ւոր աշխատողներու եւ համակիրներու ծանր եւ նուիրեալ աշխատանքին: Ան նաեւ իր հիացմունքը յայտնեց ներկաներուն, որոնք թէ՛ իբրեւ անհատ եւ թէ՛ իբրեւ հաւաքականութիւն, ամէն ձեւով կը զօրակցին Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին, ապա անգամ մը եւս հրաւիրեց զանոնք զօրակցելու այս երիտասարդ միութեան, որպէսզի իրականանան բոլորին յոյսերն ու երազները:

Եղբ. Տազէսեան ներկաները վստահեցուց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը յաջողութեան կը հասնի միայն իրենց ամբողջական նուիրումին եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» կարգախօսի հաւատքին շնորհիւ, որուն համար ան շնորհակալութիւն եւ բարի վայելում յայտնեց բոլորին ու բեմը յանձնեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանին:

«ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ-2012»Ի ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Եղբ. Աբրահամեան առաջին հերթին ներկայացուց «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական-2012»ի տիտղոսին արժանացած քոյր Մարօ Քէշիշեանի կենսագրական գիծերը, ապա բեմ հրաւիրեց եւ Շրջանային Վարչութեան անունով յատուկ յուշատախտակով մը պարգեւատրեց զայն՝ տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ին ցուցաբերած անոր անսակարկ նուիրումին

եւ միութենական օրինակելի կեցուածքին համար:

Սրտի իր խօսքը փոխանցելով՝ պարգեւատրեալը շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան ընծայած պատիւին համար, ապա Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը գնահատելով՝ երախտագիտութիւն յայտնեց անոր համար, որ կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի նման կազմակերպութեան մը, ուր ստրված է ըլլալ ինքնավստահ, համարձակ, ազգասէր ու հայրենասէր:

Իր խօսքին մէջ, քոյր Մարօ հաստատեց. «Հ.Մ.Ը.Մ.ը ինքնանպատակ կազմակերպութիւն չէ: Անիկա իր ժողովուրդին ծոցէն ծնունդ առած է, որպէսզի ծառայէ նոյնինքն իրեն ծնունդ տուած հայ ժողովուրդին: Հաւաքականութենէ հաւաքականութիւն, ուր եսը, ինքնասիրութիւնը, մեծամտութիւնը տեղ չունին: Հաւաքականութեան ձայնն է հնչողը: Գործող անհատները Հ.Մ.Ը.Մ.ի հաւաքականութեան օղակներն են, որոնք իրարու շողկապուելով՝ հզօրութեան կը վերածուին, եւ վա՛յ անոնց, որոնք ինքնասիրութենէ մեկնած կը փորձեն խանգարել այդ շղթային ընթացքը: Անոնք իբրեւ առանձին օղակներ ինքնաբերաբար կորուստի կը մատնուին»:

Հ.Մ.Ը.Մ.ը միասնական հաւաքականութեան արդիւնք բնորոշելով, քոյրը



Պատուոյ նախագահը, Մուշեղ Սրբազանը եւ Յարութ Սասունեան:

«Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ նկատեց Հ.Մ.Ը.Մ.ի համախմբման նպաստող ամենափոքր մրջնիկէն մինչեւ տարեց ծերունին եւ ինքզինք հպարտ ժառանգորդը զգաց «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներու այն շարանին, որ «Բարձրացիր-բարձրացուր» կարգախօսին հարազատ թարգմանը հանդիսանալով՝ «Միշտ պատրաստ» ըլլալ սորվեցուցած է բոլորին:

Քոյր Մարօ անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնելով իրեն ընծայուած պատիւին համար՝ եզրակացուց ըսելով՝ «Այս պահուն, հաւաքականութեան ձայնին ընդառաջելով՝ այսօրուան այս գնահատանքը կը ձօնեմ մեզմէ առ յաւելտ հեռացած եւ ինչո՞ւ չէ նաեւ՝ ապրող բոլոր այն Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք իրենց ծառայութիւնը համեստաբար կատարեցին եւ յուռ անցան, գացին: Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը»:

ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ԳԷՈՐԳԵԱՆԻ ԽՕՍԲԸ

Այնուհետեւ տեղի ունեցաւ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը յատկանշող Եռագոյն երիզներու փոխանակումը: Եղբ. Գառնիկ Աբրահամեան Նաւասարդեան 35-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ ձորձ ժամկոչեանի Եռագոյն երիզը պաշտօնապէս փոխանցեց Նաւասարդեան 37-րդ մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնած տէր եւ տիկ. Գագիկ եւ Մատինէ

Գէորգեաններուն, որոնք երկարաշունչ ծափողջոյններով գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Պատուոյ նախագահութիւնը պաշտօնապէս ստանձնելէ ետք, Գագիկ Գէորգեան շնորհակալութիւն յայտնեց իրենց ընծայուած պատիւին եւ վստահութեան համար, որուն առիթով երկրորդ հայրենիք մը յայտնաբերած էր: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթանալուն մասին յայտնեց, թէ «լինելով մասնագիտութեամբ ոսկերիչ եւ այսօր լինելով համաշխարհային հայ ոսկերիչների միութեան նախագահ՝ ես մեծ ուրախութեամբ յայտնաբերեցի եւս մի միութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի շարժումը: միութիւն՝ որ ճիշդն ասաց ինձ համար մեծ յայտնաբերութիւն եղաւ: Մօտ մէկ ամսից աւելի Միացեալ Նահանգներում եմ եւ այցելելով տարբեր մասնաճիւղեր՝ ես հասկացայ, թէ ի՞նչ հսկայական հարստութիւն ունի մեր հայ ազգը: Իսկ այսօր գտնուելով այս դահլիճում, իմ ազգիս ներկայացուցիչների շրջապատում՝ կարող եմ ասել, թէ իսկապէս հպարտ եմ որ ես հայ եմ, քանի որ իմ հայ ազգս կարողանում է ծնել այսպիսի մի գաղափար, որ տարիներ շարունակ զարգանում է, ոգեւորում է, կրթում է, առողջութիւն է տալիս մեր մատաղ սերունդին»:

Ապա, պատուոյ նախագահութեան առաջարկին անդրադառանալով, Գէորգեան յայտնեց, թէ առաջին հերթին հետաքրքրուած է Հ.Մ.Ը.Մ.ի ազգօգուտ

ըլլալու հանգամանքով, եւ ապա աւելցուց՝ «...Երբ ես ուսումնասիրութիւններ առեցի եւ հասկացայ իսկապէս մեր հայ ազգին՝ դա ոչ միայն օգուտ է, նաեւ մեր հայ ազգի երիտասարդութեան հիմնական հիմքն է, նա իսկապէս համախմբում է մեր ազգին, եւ ես դրանից յետոյ ընդունեցի որոշումը եւ մեծ հպարտութեամբ եւ ուրախութեամբ կարող եմ ասել, որ իսկապէս ես գտնում եմ, որ իբրեւ պատուոյ նախագահ՝ ի՞նչ որ հնարաւոր է, ի՞նչ որ իմ ուսերից ելնում է՝ ես պէտք է անեմ, այս ուշադրութեան համար»:

Ապա, ամէն բանէ վեր դասելով մեր հայրենիքն ու հայ լեզուն՝ ան հրաւիրեց ներկաները մասնակցելու Նաւասարդեան եզրափակիչ մրցումներուն եւ փակման հանդիսութեան: Ան Հայ Ոսկերիչներու Միութիւնն ու Հ.Մ.Ը.Մ.ը եղբայրական միութիւններ նկատելով՝ խոստացաւ իր գլխաւորած Ոսկերիչներու Միութեան անունով թիկունք կանգնիլ Հ.Մ.Ը.Մ.ին:

Պատուոյ նախագահի ոգեւորիչ ելոյթէն ետք, եղբ. Գառնիկ Աբրահամեան, առ ի գնահատանք Գէորգեաններու նուիրումին եւ նիւթաբարոյական օժանդակութեան, Շրջանային Վարչութեան անունով զանոնք պարգեւատրեց յատուկ յուշանուէրով մը:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ

Այնուհետեւ, շնորհաւորական ելոյթներ ունեցան Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Ուինտի Կրուլը եւ պատուոյ նախագահի գործընկերներէն Մայքըլ Լանդվոր:

Պաշտօնական յայտագիրի աւարտին, երեկոն խանդավառեց ձայնի հաղորդավար Վազգէնը, որուն հրամցուցած հայկական եւ միջազգային երգերն ու պարեղանակները մեծապէս խանդավառեցին արդէն իսկ ուրախ մթնոլորտը, որ շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր:

Ներկաները գոհունակութեամբ մեկնեցան տուն, Նաւասարդեան եզրափակիչ մրցումներուն եւ հնգօրեայ փառատօնի յայտագիրներուն մասնակցելու ոգեւորութեամբ:

ՃԱՆՉՆԱՆՔ

2012-Ի «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ»Ը ՔՈՅՐ ՄԱՐՕ ՔԷՇԻՇԵԱՆ

Ուրախութեամբ տեղեկացանք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը, բարձր գնահատելով բազմավաստակ միութենական, «Մարզիկ»-ի երկար տարիներու աշխատակից եւ խմբագրական կազմի անդամ քոյր Մարօ Քէշիշեանի ծառայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին, անոր շնորհած է 2012-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»-ի տիտղոսը:

Քոյր Մարօ Քէշիշեան ծնած է Լիբանանի Այն-ճար հայաւանը, ազգանուէր ընտանեկան յարկի մը տակ: Ան երրորդ զաւակն է Վահան եւ Սիրանոյշ Քէշիշեաններու եօթը զաւակներուն:

Նախնական եւ միջնակարգ ուսումը ստացած է ծննդավայրի Ազգ. Յռոաջ վարժարանէն ներս, իսկ երկրորդականը՝ Պուրժ Յամուտի Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան գոլէճէն ներս: Համալսարանական ուսումը ստացած է Լիբանանի Սէն ժոզէֆ համալսարանէն ներս եւ ւարտած է հայագիտական ամպիոնը: Պաշտօնավարած է Պուրժ Յամուտի Նոր Սիս թաղամասի Ազգ. Աքսոր Գասարճեան նախակրթարանէն ներս, նախ իբրեւ հայերէնի եւ արուեստի նիւթերու ուսուցչուհի, իսկ աւելի ուշ՝ իբրեւ մանկապարտիզպանուհի: Միաժամանակ հետեւած է Հայկազեան համալսարանի ուսուցիչներու յատուկ մանկավարժական ծրագիրին:

Քոյր Մարօ փոքր տարիքէն անդամակցած է Լիբանանահայ Օգնութեան Խաչի Այնճարի մասնաճիւղի արծուիկներու բաժանմունքին՝ իբրեւ մրջնիկ, իսկ աւելի ուշ փոխանցուած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրժ Յամուտի մասնաճիւղ՝ իբրեւ արենոյշ Վարիչ Առաջնորդ, ուր հասած է մինչեւ մասնաճիւղի խմբապետուհիի աստիճանի: Այնուհետեւ, ան արժանացած է Լիբանանի



Շրջանային խմբապետուհիի աստիճանին՝ վարելով համապատասխան պաշտօնը: Պատասխանատու զանազան պաշտօններ ըստանձնած է մասնաճիւղի եւ շրջանային մակարդակներու վրայ:

1984-ին ան փոխադրուած է Արեւմտեան Միացեալ Նահանգներ եւ աշխատած է շրջանի Հ.Յ.Գ. պաշտօնաթերթ «Ասպարէզ»-ին մէջ, նախ իբրեւ գրաշար եւ թղթակից, ապա՝ իբրեւ խմբագրական կազմի անդամ: Եղած է նաեւ «Հորիզոն»-ի թղթակից եւ արխիւներու պատասխանատու:

1984-էն ի վեր գործօն անդամ է Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին: Թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Մ. Նահանգներու մէջ, քանի մը շրջանի համար վարած է Շրջանային խմբապետուհիի աստիճանը: Բազմիցս ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամ:

Իբրեւ սկաուտ ղեկավար եւ կազմակերպիչ՝ մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային եւ Հայաստանի մէջ կազմակերպուած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումներուն:

1990-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ գործուղուած է Հայաստան, ուր սփիւռքահայ ուսանողներու գործակցութեամբ նախաձեռնած է Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպչական աշխատանքներու, նախ՝ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարը տարածելով եւ ապա՝ մասնաճիւղեր հիմնելով Հայաստանի մէջ:

Քոյր Մարօ Անդամ է «Boy «Scouts of America»-ի «Verdugo Council»-ին: Արժանացած է «Wood Bage»-ի երրորդ տախտակին (Bead):

Ան գործօն մասնակցութիւն բերած է Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպչական աշխատանքներուն: Թղթակիցն է շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին: Միաժամանակ, մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարզիկ» ամսաթերթի խմբագրութեան, աւելի քան 25 տարի անոր մնայուն աշխատակիցը ըլլալէ ետք:

2011-ին արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական «Արարատեան» բարձրագոյն կարգին:

«Ամբողջ էութեամբ կը հաւատամ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան, որուն համար Հ.Մ.Ը.Մ.ը կեանքիս անբաժան մասը դարձած է», այս առիթով արտայայտուած է քոյր Մարօ Քէշիշեան:





ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՒՂԱՅԻՆ 22-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅԱՂԹԱՆԱԿՈՎ



Վաղե թանաչեան ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

ՀՄ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու միջ-մասնաճիւղային 22-րդ մարզախաղերը տեղի ունեցան 4-8 Յուլիսին, հովանաւորութեամբ թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի, նախագահութեամբ տէր եւ տիկին Գէորգ եւ էլիզապէթ Գազանճեաններու, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեանի եւ հիւրընկալութեամբ Ուաշինկթընի մասնաճիւղին:

Հ.Մ.Ը.Մ.Ի տարեկան այս մարզախաղերը առիթ մըն են սատարելու միութեան վսեմ նպատակին, երբ շրջանի 10 մասնաճիւղերէն ժամանած Հ.Մ.Ը.Մ.Ի-ականներ եւ համակիրներ, Հ.Մ.Ը.Մ.Ի շունչով եւ ոգիով գօտեպնդուած, կը հաւաքուին միջ-մասնաճիւղային խաղերու զրօշին տակ՝ մրցելու հայ-

կական ազնիւ ոգիով, ստեղծելու խանդավառ մթնոլորտ, ծառայելու «Բարձրացիր-բարձրացուր»ին, միշտ ի մտի ունենալով որ այս խաղերէն յաղթական դուրս պիտի գայ Հ.Մ.Ը.Մ.ը միայն:

Այսպէս, չորս օրերու վրայ երկարող խաղերու ընթացքին, դաշտերու վրայ, պանդոկի միջանցքներուն թէ ամէնուրեք, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը հանդիպեցաւ իր եղբոր ու քրոջ, որոնք ժամանած էին Արեւելեան Մ. Նահանգներու 10 շրջաններու մասնաճիւղերէն.- Ալպրնի, Նիւ Եորք, Նիւ Ճորճի, Շիքակօ, Պոսթըն, Տիլթոյթ, Փրովիտընս, Ֆիլատելֆիա, Ֆլորիտա եւ հիւրընկալ մասնաճիւղ Ուաշինկթընէն:

Յուլիս 4-ին բոլոր մարզիկները, սկստները եւ համակիրները, խումբ առ խումբ, ժամանեցին մայրաքաղաք Ուաշինկթընի «Ուոտլի Փարք Մարիոթ» պանդոկը, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղերու պատասխանատուներու կարճ ժողով մը, բացատրելու համար մարզախաղերուն դասաւորումը, օրէնքները եւ կարգապահական խստապահանջ պայմանները:

ԽՄԲԱՅԻՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ





Հինգշաբթի, 5 Յուլիսի առաւօտեան ժամը 9-ին, «Ճըրմընթաուն» շրջանի «Տիսթալըրի Սփորթս Սենթըր» մարզահամալիրի դաշտերուն վրայ սկսան խմբային խաղերը: Մօտաւորապէս 450 մարզիկ-մարզիկուհիներ, ծիլ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթերան դասակարգերով, իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ մարզախաղերուն.- Ֆուլթայոլի 6 խումբեր, վոլիպոլի 15 խումբեր, պասթեթպոլի 35 խումբեր, ընդհանուր՝ 56 խումբեր եւ 77 խմբային խաղեր:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Անհատական մարզախաղերուն արձանագրուած էին լողի 37 մարզիկներ եւ աթլետիկայի 50 մարզիկներ: Օդի չափազանց տաքութեան պատճառով, եւ նկատի առնելով մարզիկներու առողջութիւնը, որոշուեցաւ ջնջել աթլետիկամի խաղերը, որոնք տեղի պիտի ունենային Շաբաթ, 7 Յուլիսի առաւօտեան: Լողի մրցումները տեղի ունեցան «Տիսթալըրի Սփորթս Սենթըր» մարզահամալիրի լողաւազանին մէջ, ուր ծնողներու եւ համակիրներու ջերմ քաջալերանքով մարզիկները մրցեցան ապահովելու ոսկի կամ արծաթ մետալներ: Հիւրընկալ Ուաշինկթընի մասնաճիւղի մարզիկները արժանացան առաւելագոյն թիւով մետալներու:

ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Մարզիկներու իջեւանած պանդոկին մէջ, Ուրբաթ, 6 Յուլիսի երեկոյեան տեղի ունեցաւ պարահանդէս, մասնակցութեամբ այս առիթով Հայաստանէն ժամանած երգիչ Թաթա Սիմոնեանին եւ իր նուագախումբին, ընկերակցութեամբ ձայնի հաղորդավար Բաֆֆին: Թաթան ժողովրդային իր սիրուած երգերով խանդավառեց ներկաները,



Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժան Աւետիսեան, մարզախաղերու նախագահ Գեորգ Գազանձեան, Առաջնորդ Օշական Արք. Զոլոյեան եւ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Թաթուլ Մարգարեան:

որոնք առաւօտեան ժամը երեքին սրահին հեռացան բարձր տրամադրութեամբ:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՆ

Շաբաթ, 7 Յուլիսի երեկոյեան, Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց զնահատանքի իր երեկոն, որուն ներկայ գտնուեցան միջ-մասնաճիւղային 22-րդ մարզախաղերու նախագահ տէր եւ տիկին Գեորգ եւ էլիզապէթ Գազանձեաններ, թեմի Առաջնորդ Օշական Արք. Զոլոյեան, Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Թաթուլ Մարգարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Արցախի Հանրապետութեան Ուաշինկթընի գրասենեակի ներկայացուցիչ Ռոպէրթ Աւետիսեան, Հայաստանի դես-

պանատան գինուորական կցորդ գնդապետ Մեսրոպ Նազարեան, հայկական բանակի սպաներ Արտակ Տօնոյեան եւ Արտիոմ Գէորգեան, Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս Քհնյ. Ագթաւուգեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Շրջանային Վարչութեան նախկին ու ներկայ անդամներ, Շրջանային Վարչութեան յանձնախումբերու քոյրեր ու եղբայրներ, մարզախաղերու կազմակերպիչ մասնաճիւղի վարչութեան եւ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի ներկայացուցիչներ:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան եւ Շրջանային Վարչութեան անդամ քոյր էլիզապէթ Տրամկոչեան եռագոյն դրօշով պատուեցին օրուան նախագահնե-

րը, որոնք խօսք առնելով զնահատեցին այս ձեռնադրութիւնը, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

ՅԱՂԹԱՆԱԿԻ

ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Շաբաթ, 7 Յուլիսի երեկոյեան տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը Ուաշինկթընի «Ուոտլի Փարք Մարիոթ» պանդոկի շքեղ սրահին մէջ: Պաշտօնական բաժինը բացուեցաւ պատուոյ հիւրերու մուտքով: Ներկայ էին 500-է աւելի Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիր ազգայիններ, որոնք ապրեցան յիշատակելի երեկոյ մը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հետ:

Պատուոյ սեղանին վրայ ներկայ էին Արեւելեան Մ. Նահանգներու թեմի Առաջնորդ Օշական Արք. Զոլոյեան,



Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Թաթուլ Մարգարեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, մարզախաղերու նախագահ տէր եւ Տիկին Գէորգ եւ էլիզապէթ Գազանճեաններ, Արցախի Հանրապետութեան Ուաշինկթընի գրասենեակի նախագահ Եւգենի Ռոպէրթ Աւետիսեան, Հայաստանի դեսպանատան գինուորական կցորդ գնդապետ Մեսրոպ Նազարեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժան Աւետիսեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան, Հ.Մ.Ը.Մ-ի Ուաշինկթընի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Երան Սիմոնեան, մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Վահէ Թանաչեան եւ օրուան հանդիսավար Յովսէփ Աւագեան: Պատուոյ հիւրերու շարքին էին ՀՕՄ-ի Արեւելեան շրջանի ներկայացուցիչ Սիլվա Քէշիշեան: Շրջանային Վարչութեան սեղանին ներկայ էին փոխ ատենապետ եղբ. Թորոս Ոսպիկեան, ատենադպրուհի քոյր էլիզապէթ Տրամկոչեան, գանձապահ քոյր Արշօ Գանթարճեան, մարզականի ներկայացուցիչ եղբ. Սարգիս Դարբինեան, սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Արամ Գալսեթեան եւ եղբ. Պերճ Փափագեան: Ներկայ էին նաեւ Շրջանային մարզական յանձնախումբի ատենապետ եղբ. Փօլ Գոգուզեան, անդամ եղբայրներ Յակոբ Սոլաքեան, Ռազմիկ Փանոսեան եւ Սեւան Թորոսեան:

Հանդիսութեան պաշտօնական բացումը կատարուեցաւ Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգներով, կատարողութեամբ Էմմա Սողոմոնեանի եւ եղբ. Գէորգ Թաթարեանի:

Սրբազան Հօր սեղանի օրհնութենէն եւ ճաշէն ետք, օրուան յայտագիրը բացւած յայտարարուեցաւ Յովսէփ Աւագեանի կողմէ: Ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք, ան հաստատեց, որ այս ձեռնարկը յաղթանակի ճաշերոյթ պարահանդէս կ'անուանենք ոչ թէ անոր համար, որ այս խաղերուն արդիւնքով կան յաղթող մարզիկներ, այլ անոր համար որ այս խաղերէն միշտ ալ յաղթական դուրս եկած է Հ.Մ.Ը.Մ-ը, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը ֆուլթայլի, վոլի-



պոլի, պասքեթպոլի կամ այլ մարզաձեւերու համախմբում մը չէ, այլ՝ Հայկական Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն մըն է, որ կը ձգտի ազգային վսեմ նպատակներու, հետեւաբար այսօրուան յաղթանակը այդ նպատակին իրագործման աշխատանքներու յաղթանակն է եւ որուն համար հայ ժողովուրդի յաղթանակն է:

Առաջին խօսքը առաւ հիւրընկալ մասնաճիւղի վարչութեան եւ կազմակերպիչ յանձնախումբի կողմէ ատենապետ եղբ. Վահէ Թանաչեան: Եղբայրը Ուաշինկթընի մասնաճիւղին անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ան շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ յանձնախումբին, ենթայանձնախումբերուն եւ բոլոր անդամներուն, ընտանիքներուն ու կազմակերպութիւններուն, որոնք ամիսներ շարունակ անսակարկ աշխատեցան խաղերու յաջողութեան համար, ի սէր Հ.Մ.Ը.Մ-ին: Ան մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր, դեսպանին եւ մարզախաղերու նախագահին իրենց ներկայութեան եւ աջակցութեան համար:

Եղբայր Թանաչեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Սիրելիներ ... մեր հիմնադիրներու երազով ու մեր սկաուտներու եւ մարզիկներու կամքով ամուր ու բարձր պահենք մեր եռագոյնը ու շարունակենք միասնաբար գործել մեր սիրելի «Բարձրացիր-բարձրացուր» ի նշանաբանով»:

Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու

Կեդրոնական Կոմիտէի կողմէ խօսք առաւ Ժան Աւետիսեան: Ան իր խօսքին մէջ ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի հաստատաքայլերը շրջանին մէջ ու ըսաւ, թէ՛ «Արեւելեան Մ. Նահանգներու Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէն, յանձինն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մեծ ընտանիքին, կու գայ անգամ մը եւս ողջունելու Արեւելեան շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային ողիմպիական խաղերը, որոնք այս տարի նուիրուած են Հայաստանի Հանրապետութեան ազգային բանակի կազմութեան 20-ամեակին ու, անկասկածօրէն, Հ.Մ.Ը.Մ-ական ընտանիքի բոլոր անդամներուն ու յատկապէս՝ պատասխանատու մարմիններու երկար եւ հետեւողական աշխատանքին, ճիգին ու քրտինքին արդիւնքն է, որ կը ներկայանայ մեզի այսօր, մեր անկախ հայրենիքի քաջարի բանակին արժանաւոր ներկայացուցիչներուն մասնակցութեամբ:

«Այս առիթով Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի կողմէ պարտականութիւնը ունիմ վերահաստատելու դաշնակցական ընտանիքին պատրաստակամութիւնը ձեր կողքին կանգնելու: Անկասկած, որ հայրենասէր հայու ոգիով պիտի շարունակէք գործել, միշտ բարձրանալ ու բարձրացնել հայու պատիւն ու կորովը, ըլլայ մարզադաշտի վրայ, ըլլայ անձնական կեանքի օրինակով, ի փառս հայ ժողովուրդին ու անոր վերականգնող հայրենիքին:



Արցախի հանրապետության Ուաշինգթոնի գրասենյակի Երկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան եւ Հայաստանի դեսպանատան գինւորական կցորդ գնդապետ Մեսրոպ Նազարեան:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր իր յարատեւ քաջալերանքին համար: Բարի գալուստ յայտնեց Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչին, գինուորական կցորդին եւ Արցախի ներկայացուցիչին, որոնց ներկայութիւնը յաւելեալ պատիւ կը բերէ Հ.Մ.Ը.Մ-ին: Ան գնահատանքի խօսքեր ուղղեց հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ-ի Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպիչ յանձնախումբին եւ Շրջանային մարզական յանձնախումբին, իրենց տարած աշխատանքին համար, ինչպէս նաեւ՝ շրջանի տասը մասնաճիւղերու վարչութիւններուն, որոնք հսկայական աշխատանք կը տանին շարունակելով միութեան հիմնադիրներուն աշխատանքը: Այս հրաշալի կազմակերպութեան իբրեւ մէկ մասնիկ, Արեւելեան շրջանը կը ջանայ իր լաւագոյնը մատուցել եւ նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին մէջ իր անուրանալի ներդրումը ունենալ:

Եղբ. Աբգարեան իր խօսքին մէջ նաեւ նշեց, որ այս խաղերը սովորական մրցաշարք մը չեն, ուր կ'արձանագրուին յաղթողներ ու պարտուողներ, այլ անկէ անդին՝ նպատակ ունին Հ.Մ.Ը.Մ-ականին վայել, ազնիւ մրցակցութեան մթնոլորտի մէջ քով-քովի գալու, նախկին ծանօթութիւններ ամրապնդելու ու նոր ծանօթութիւններ հաստատե-

լու, որոնք ի վերջոյ կը նպաստեն մեր հաւաքական կամքի ամրապնդման, մէկը միւսով հօգրանալով՝ իւրաքանչիւրս ակելի կը գօտեպնդուի Հ.Մ.Ը.Մ-ի նուիրական գաղափարներով եւ վերանորոգուած կորովով վերադառնալու մեր շրջանները՝ շարունակելու համար մեր գործն ու ծառայութիւնը, ի խնդիր մեր ազգային գիտակցութեան պահպանման, ազգասիրութեան ու հայրենասիրութեան, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի ընդմէջէն ծառայելու մեր համայնքի կարիքներուն հայրենիքի հօգրութեան ու զարգացման:

Իր խօսքին աւարտին, եղբայրը բեմ հրաւիրեց մարզախաղերու նախագահ տէր եւ տիկին Գէորգ եւ էլիզապէթ Գազանճեանները եւ անոնց յանձնեց յատուկ յուշանուէր մը:

Նախագահներուն կողմէ խօսք առաւ անոնց դուստրը՝ Մարալ Գազանճեան-Պողաճեանը: Ան ըսաւ, թէ մեծ ուրախութիւն է իրեն համար ներկայ ըլլալ այս մեծ ընտանիքին մէջ, ուր ինք անցուցած է իր մանկութեան եւ պատանեկութեան տարիները ու ստացած է իր հայեցի դաստիարակութիւնը: Ան շարունակեց ըսելով, թէ իր ծնողքին փափաքն էր որ ինք արտասանէ այս խօսքը, որովհետեւ անոնք կը հաւատան, որ մեր ազգի վերելքին համար միշտ կարիքը ունինք երիտասարդութեան:

Մարալ Գազանճեան-Պողաճեան հաստատեց, որ իր ծնողքը ընդունեց մարզա-

խաղերու նախագահութեան պատիւը՝ ի յիշատակ իր մեծ հօր Յովհաննէս Գազանճեանին, որ իր կեանքին ընթացքին եղած է հայ ազգի հաւատարիմ ծառան: Ան իր խօսքը ուղղելով իր մեծ հօր ըսաւ. «Մեծ հայրիկ՝ քեզմով շատ հպարտ ենք, դուն ծառայեցիր ազգին ու հայրենիքին, այսօր տղուդ գաւակները եւ թոռները իրենց ընկերներով, սկառուտներով եւ մարզիկներով եռագոյնը բարձր դրած ու ամուր պահած իրենց հոգիներուն մէջ՝ կը շարունակեն ձեր սուրբ գործը հայութեան եւ Հայաստանի սիրոյն»:

Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսին յատկանշական երեւոյթ էր Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Թաթուլ Մարգարեանի ներկայութիւնը: Ան իր խօսքին մէջ բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի ներկայութիւնը հայ կեանքէն ներս, մանաւանդ՝ Սփիւռքի մէջ, ուր Հ.Մ.Ը.Մ-ի ջանքերով ի մի կը հաւաքուին հայ մատղաշ սերունդները, որոնք մարմնով եւ հոգիով կը պատրաստուին, որպէս ապագայ հայ սերունդներ:

Յաջորդ խօսք առնողն էր Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան: Եղբայրը յայտնեց, որ «Հայրենագրկման 70 տարիներուն սփիւռքահայութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտական առիւնքնող շարքերուն մէջ կը տեսնէր հայոց բանակի խրոխտ ու հպարտ պատկերը եւ անոր պարգած եռագոյնին մէջ կը տեսնէր ազատ ու անկախ պետականութեան տեսլականը»:

Այս առիթով, «Յանուն Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին ի սրտէ կը շնորհաւորենք հայոց բանակին քսանամեակը եւ խաղաղ ծառայութիւն կը մաղթենք մեր գինուորներուն ու սպաներուն», նշեց ան:

Շարունակելով, եղբ. Մեսրոպեան նշեց, որ «Հ.Մ.Ը.Մ-ի պայծառատես



Առաւելագոյն կէտեր հաւաքած Ուաշինկթընի մասնաճիւղի մարզիկներ:

հիմնադիրները առաջին իսկ օրէն ընդգծեցին երիտասարդութեան կարեւորութիւնը եւ զայն նկատեցին ազգի ապագան, մարդկային ու ազգային արժէքներով զինեցին զայն, որպէսզի կարենայ դիմագրաւել մեր ազգին առջեւ դրուած մարտահրաւէրները:

Երիտասարդութեան կարեւորութիւնը շեշտող Հ.Մ.Ը.Մ-ի մօտեցումը նոյնն է նաեւ այսօր, որուն դրսեւորումներէն էր 2011 Սեպտեմբերին Ծաղկածորի մէջ գումարուած 10-րդ Պատ-

գամաւորական ժողովին որդեգրած Ռազմավարական Ծրագիրը, որուն կարեւոր կէտերէն մէկն էր երիտասարդութեան ներգրաւումը եւ հայախօսութեան զարկ տուող ծրագիրներու մշակումը:

«Այսօր,- ընդգծեց եղբ. Մեսրոպեան,- աւելի համոզուած ենք, որ ազգային արժէքներով զինուած, ազգին ու հայրենիքին ծառայելու գաղափարին կառչած երիտասարդութիւնն է ազգի ու հայրենիքի գոյատեւման ու բարգա-

ւածման բանալին, իսկ գաղափարապաշտ երիտասարդութիւն կերտելու գործը Հ.Մ.Ը.Մ-ի նուիրական առաքելութիւնն է, որուն պէտք է աջակցինք բոլորս եւ մեր ունեցած բոլոր հնարաւորութիւններով»:

Եղբայրը իր խօսքը եզրափակեց ըսելով. «Պատահական չէ, որ միջ-մասնաճիւղային Նաւասարդեան այս խաղերը նուիրուած են հայրենի բանակի քսանամեակին, որովհետեւ մենք նմանութիւններ կը տեսնենք այս երկու կառոյցներուն միջեւ: Ծիշդ է, Հ.Մ.Ը.Մ-ականը հայրենիքի սահմանները չի պաշտպաներ, բայց նաեւ ճիշդ է, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր ծննդեան առաջին օրէն եղած է հայապահպանման առաջին գիծերու վրայ: Ծիշդ է, որ մեր շարքերը զէնքով չեն զինուած, բայց նաեւ ճիշդ է, որ Հ.Մ.Ը.Մ-ականները զինուած են ազգային արժէքներով ու գաղափարախօսութեամբ՝ ի պաշտպանութիւն մեր ազգային գոյատեւման եւ իրաւունքներուն ձեռքբերման»:

Վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան: Ան իր խօսքը երիտասարդութեան ուղղելով շնորհաւորեց միջ-մասնաճիւղային 22-րդ մարզախաղերուն յաջողութիւնը եւ յիշեցուց, որ զանազան կազմակերպութիւններ եկած ու զացած են, բայց Հ.Մ.Ը.Մ-ը 28 Մայիս 1918-ի պայքարէն ու մեր ժողովուրդի ծոցէն ծնած, կը մնայ միշտ երիտասարդ: «Հ.Մ.Ը.Մ-ի սկզբունքները եւ մեր ազգային սրբութիւնը շունչ եւ արիւն տուած են մեզի եւ մեր բոլորին պարտականութիւնն է պահպանել զանոնք», ըսաւ Սրբազանը: Ապա, ան յիշեց իր պատանեկան տարիները, երբ իբրեւ գայլիկ եւ սկաուտ կը կերտուէր Հ.Մ.Ը.Մ-էն ներս: Ան ըսաւ. «Հաւատացինք այս ընտանիքին, որ հարազատ է մեր ժողովուրդի նկարագրին: Հ.Մ.Ը.Մ-ը մերն է ու կը պահէ մեզ»: Հայաստանի զինեալ ուժերու հիմնադրութեան 20-ամեակին անդրադառնալով, ան ըսաւ. «Հայ զինուորը Հայաստանի լեռներուն վրայ կը պաշտպանէ հայ ժողովուրդը, իսկ հոս Հ.Մ.Ը.Մ-ականները կը պաշտպանեն հայ ժողովուրդը, արթուն պահակը դառնալով անոր իրաւունքներուն»: Ան շարունակեց ըսելով, որ այս օտար ափերուն

ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ 22-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Միջ-մասնաճիւղային մարզախաղերու աւարտին, արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.-

ՄԱՐԶԱԽԱՂ

ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ

Pee Wee Basketball	Նիւ Գրոզի	Ուաշինկթըն
Pee Wee Soccer	Նիւ Գրոզի	Ուաշինկթըն Բ.
Midget Basketball	Նիւ Գրոզի	Տիթոնթ
Junior Men's Basketball	Ֆիլատելֆիա	Պոսթըն
Junior Women's Basketball	Նիւ Գրոզի	Պոսթըն
Senior Men's Basketball	Նիւ Գրոզի	Նիւ Եորք
Senior Women's Basketball	Ուաշինկթըն	Նիւ Գրոզի
Senior Men's Soccer	Ուաշինկթըն	Պոսթըն
Senior Women's Volleyball	Ուաշինկթըն	Նիւ Գրոզի
Senior Men's Volleyball	Ուաշինկթըն	Շիքակօ
Veteran Basketball	Նիւ Եորք	Ֆիլատելֆիա

Հ.Մ.Ը.Մ.Ը ՀԻՄՔ Է ՍՏԵՂԾՈՒՄ ԳԱԼԻՔ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(ՀԱՏՈՒԱԾ՝ ԳՆԴ. ՄԵՍՐՈՊ ՆԱԶԱՐԵԱՆԻ
Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՈՂԶՈՅՆԻ ԽՕՍՔԷՆ)

Ռոյլ տուէք ողջունել ձեզ Հ.Մ.Ը.Մ.ի ամենամեայ խաղերի եւ հայոց բանակի 20-ամեակի կապակցութեամբ կազմակերպուած այս գեղեցիկ միջոցառմանը: Արդեօք պատահակա՞ն է, որ այս երկու առիթները շաղկապուում են: Ի հարկէ՝ ոչ: Ոչ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը մի կարելորագոյն հայկական կառոյց է, որը տասնամեակներով կոփել եւ կոփում է առողջ երիտասարդ սերունդ, պատանիներ եւ աղջիկներ, որոնցից շատերը մի օր, եթէ Աստուած մի արասցէ հարկ լինի, կարող են գալ իրենց երկրի սահմանները պաշտպանելու: Որ մի հայը, Հայաստանում եւ

Սփիւռքում, չգիտէ այն ներդրումի մասին, որ Սփիւռքի մեր հայրենակիցները մօտ երկու տասնամեակ առաջ բերեցին հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործին: Արտասահմանի մեր հայրենակիցները նաեւ կենտրոնական դեր ունեցան Հայաստանին նիւթական եւ մարդասիրական օգնութիւն տրամադրելու առումով: Ուրեմն կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը, որը վառ պահելով աւանդոյթները՝ հիմք է ստեղծում գալիք յաջողութիւնների համար, մարզում, կոփում առողջ, պատուախնդիր եւ հայրենասէր սերունդ այստեղ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներում:

վրայ այս կազմակերպութիւնը կը մնայ հայ ազգի սեփականութիւնն եւ այսօր անոր դրօշը կը ծածանի աշխարհի բոլոր ծագերուն:

Յայտագրի գործադրութեան աւարտին, ներկաները վայելեցին Գանատայէն ժամանած երգիչ Յարութ Պետրոսեանը եւ իր նուագախումբը, որոնք միջնորդութեամբ խանդավառեցին ազգաբարեկան ու ժողովրդային ճոխ երգերով: Կէս գիշերէն ետք, երիտասարդ երգիչ

Քրիստափոր Արապեան միջնորդութեամբ աւելի խանդավառեց ազգային-յեղափոխական երգերու փունջով մը:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 8 Յուլիսի կէսօրին տեղի ունեցաւ մարզախաղերու փակման հանդիսութիւնը, «Ուտոլի Փարք Մարիոթ» պանդոկի շքեղ սրահին մէջ: Օրուան հանդիսավարն էր Յովսէփ Աւագեան:

Փակման հանդիսութեան, նախ մուտք գործեցին պատուոյ հիւրերը, ապա՝ Ուաշինկթընի նորակազմ շեփորախումբին ընկերակցութեամբ, դրօշակակիրներու եւ Շրջանային խմբապետի առաջնորդութեամբ, տողանցեցին շրջանի արի եւ արեւոյշներու, արծիկներու եւ գայլիկներու խումբերը եւ 10 մասնաճիւղերու մարզիկները:

Հանդիսութեան պաշտօնական բացումը կատարուեցաւ Մ. Նահանգներու քայլերգով, կատարողութեամբ տասնամեայ Մարին Պալեանի: Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները կատարեց եղբ. Գէորգ Թաթարեան:

Օրուան հանդիսավարը ներկայացուց պատուոյ հիւրերը՝ Արեւելեան Մ. Նահանգներու Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան, Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Թաթուլ Մարգարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, մարզախաղերու նախագահ տէր եւ տիկին Գէորգ եւ Էլիզապէթ Գազանճեաններ, Արցախի Հանրապետութեան Ուաշինկթընի գրասենեակի ներկայացուցիչ Ռոպէրթ Աւետիսեան, Հայաստանի դեսպանատան գինուորական կցորդ զնդապետ Մեսրոպ Նազարեան,



Լաւագոյն վարքը ունեցող Շիբոկոյի մասնաճիւղի մարզիկներ իրենց բաժակին հետ:



Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ժան Աւետիսեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան: Եւ որովհետեւ միջ-մասնաճիւղային 22-րդ մարզախաղերը նուիրուած էին Հայաստանի գինեալ ուժերու 20-ամեակին, զնդապետ Մեսրոպ Նազարեանի կողքին, պատուոյ հիւրերու շարքին էին Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կարգադրութեամբ, Միացեալ Նահանգներու այլ նահանգներէ ժամանած Հայաստանի բանակէն երկու սպաներ՝ Արտակ Տօնոյեանը եւ Արտիոմ Գէորգեանը, որոնք կ'ուսանին ամերիկեան ռազմագիտական ուսումնական հաստատութիւններու մէջ:

Այս առիթով խօսքեր արտասանեցին

Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ժան Աւետիսեան, մարզախաղերու նախագահ Գէորգ Գազանճեան, Արցախի Հանրապետութեան Ուաշինկթընի գրասենեակի ներկայացուցիչ Ռոպէրթ Աւետիսեան, դեսպան Թաթուլ Մարգարեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան եւ Օշական Արք. Զորոյեան: Օրուան գլխաւոր պատգամախօսն էր Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան գինուորական կցորդ զնդապետ Մեսրոպ Նազարեան:

Խօսք առնողները դրուատեցին Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութիւնը սփիւռքեան մեր իրականութեան մէջ եւ հաստատեցին այն իրականութիւնը, որ հայ-

րենիքը իր պետականութեամբ եւ բանակով, իսկ Սփիւռքը իր կազմակերպութիւններով, կը կազմեն մէկ ամբողջութիւն, ի դէմ հայ ազգի դիմագրաւած մարտահրաւէրներուն: Այս իրականութիւնը լաւապէս արտացոլուած էր փակման հանդիսութեան ընթացքին, երբ Հայաստանի ու Արցախի պետական եւ գինուորական ներկայացուցիչները, Արեւելեան Մ. Նահանգներու հոգեւոր ու քաղաքական ղեկավարութեան հետ միասին հաստատեցին «Մէկ հայրենիք, մէկ ազգ» իրականութիւնը:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, Սրբազան հօր եւ Հայաստանի դեսպանին՝ իրենց տեւական քաջալերանքին համար: Ան բարձր գնահատեց հիւրընկալ մասնաճիւղին տարած աշխատանքը, ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկներու եղբայրական ոգին եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց դեսպանատան գինուորական կցորդ զնդապետ Մեսրոպ Նազարեանին եւ հայ սպաներուն, որոնց ներկայութիւնը յատկանշական երեւոյթ էր այս խաղերուն:

Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ժան Աւետիսեան խօսքը մարզիկներուն եւ սկաուտներուն ուղղելով ըսաւ. կասկած չունինք, որ Հ.Մ.Ը.Մ-ականի ոգիով եւ վճռակամութեամբ պիտի շարունակէք գործել, մինչեւ հասնի այն օրը, երբ Հ.Մ.Ը.Մ-ը իր գործունէութիւնը տանի Արարատի լանջին:

Արցախի Հանրապետութեան Ուաշինկթընի գրասենեակի ներկայացուցիչ Ռոպէրթ Աւետիսեան ազատ Արցախի պետութեան եւ ժողովուրդին անունով ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի ազգանուէր երթը, հաստատեց թէ այստեղ տողանցող Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ ազգային բանակի ներկայացուցիչներու հաստատակամ քայլերը առաւել եւս պիտի ամրապնդեն Արցախի անկախութիւնը:

Մարզախաղերու նախագահ Գէորգ Գազանճեան հաստատեց, թէ իրեն եւ ընտանիքին համար արժանավայել պատիւ էր ընդունիլ այս խաղերուն նախագահութիւնը, որով կը ծառայենք Հ.Մ.Ը.Մ-ի ազգանուէր գաղափարին: Ան ուրախութիւն յայտնեց տեսնելու Հ.Մ-

Ը.Մ.ի գրոշին տակ հաւաքուած հայ մարզիկները, սկաուտները եւ մաղթանք յայտնեց հայութեան զաւակները տեսնելու մէկտեղուած, որպէսզի ամուր ըլլանք ազգովին ու ամուր մնայ մեր հայրենիքը՝ Հայաստանը:

Դեսպան Թաթուլ Մարգարեան իր խօսքին մէջ բարձր գնահատեց Հ.Մ.-Ը.Մ.ի սկաուտներուն եւ հայկական բանակի սպաներուն միատեղ տողանցքը, ուժ եւ կորով մաղթեց բոլորին՝ շարունակելու հայ ժողովուրդին երթը դէպի պայծառ ապագայ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան անդրադարձաւ Կեդրոնական Վարչութեան կողմէ նախատեսուած երկու կարեւոր ձեռնարկներու, առաջինը՝ միջ-ցամաքամասային մարզական խաղերը, որոնք տեղի պիտի ունենան Նոյեմբեր 2012-ին, Արժանթինի մէջ, մասնակցութեամբ Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Գանատայի, Աւստրալիոյ եւ Հարաւային Ամերիկայի

չրջաններուն: Երկրորդը՝ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական մարզախաղերը, որոնք տեղի պիտի ունենան Հայաստանի մէջ, Օգոստոս 2013-ին:


Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեանի Հայրական պատգամով ու «Պահպանիչ»ով հանդիսութիւնը հասաւ իր աւարտին:

Այնուհետեւ տեղի ունեցաւ ախոյեան խումբերու բաժակներու բաշխումը: Եղբ. Արա Մարկոսեանի յիշատակին հինգ տարուան շրջուն բաժակին տիրացաւ Ֆլորիտայի մասնաճիւղը, իբրեւ լաւագոյն բարելաւումը արձանագրած մասնաճիւղ: Շիքակոն ստացաւ լաւագոյն վարքը ունեցող մասնաճիւղի բաժակը: Իսկ հիւրընկալ մասնաճիւղը՝ Ուաշինկթընը ստացաւ խաղերու լաւագոյն մասնաճիւղի բաժակը, տիրանալով խաղերու մրցանակներու առաւելագոյն թիւով կէտերուն: Արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.-

- | | |
|---------------|--------|
| 1. Ուաշինկթըն | 49 կէտ |
| 2. Նիւ Ճըրզի | 41 կէտ |

- | | |
|---------------|--------|
| 3. Պոսթոն | 33 կէտ |
| 4. Նիւ Եորք | 19 կէտ |
| 5. Ֆիլատելֆիա | 12 կէտ |
| 6. Շիքակո | 9 կէտ |
| 7. Տիթրոյթ | 5 կէտ |
| 8. Փրովիտընս | 4 կէտ |
| 9. Ֆլորիտա | 4 կէտ |
| 10. Ալպընի | |

Այսպէս, միջ-մասնաճիւղային 22-րդ մարզախաղերը անգամ մը եւս իրենց աւարտին հասան Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով: Այս մարզախաղերով Արեւելեան Մ. Նահանգներու շրջանը նոր խթան ստացաւ, մարզախաղերուն մասնակցող բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները ձեռով մը վերանորոգեցին իրենց ուխտը, քսաներկու անգամ աւելի զօրաւոր կամքով շարունակելու «Բարձրացի՛ր-բարձրացուր»-ի ուղին, յուսալով որ 2013-ի միջ-մասնաճիւղային մարզախաղերը վերանորոգուած եռանդով կը կատարեն Ֆլորիտայի մէջ:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon


Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄԻ 2012-Ի ՄԱՐԱԹՈՆԸ Ի ՆՊԱՍ ՀԱԲԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ

Թղթակից ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄ

Կիրակի, 3 Յունիսին, երրորդ տարին ըլլալով, Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի Փալերմօ շրջանին մէջ տեղի ունեցաւ «Արմենիա կը վազէ» մարաթոնը, Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութեամբ: 3 եւ 8 քլմ. վազքի մրցումներուն մասնակցեցան աւելի քան 2000 հոգի: Անգամ մը եւս, «Արմենիա կը վազէ հաւասարու-

թեան եւ յիշողութեան համար» նշանախօսքը հայ համայնքը մղեց մասնակցելու՝ վազելով, քայլելով կամ, պարզապէս, ներկայ գտնուելով եւ, նոյն ժամանակ, առիթ տալով մեր գաղափարներուն բաժնեկից ոչ-հայերու, որ իրենք ալ իրենց մասնակցութիւնը բերեն արդէն աւանդութիւն դարձած այս նախաձեռնութեան:

Բոլոր մասնակիցները կանուխ ժամերէն սկսան մարաթոնին նախապատրաստական աշխատանքներուն. ոչ ոք ուզեց բացակայիլ այսքան կարեւոր ձեռնարկէ մը: Նախորդ տարիներունման, ընտանիքները երանելի օր մը վայելեցին՝ մանուկները իրենց ծնողներուն ընկերակցութեամբ, փոքրիկները հեծանիւներով, պատանիներ, երիտասարդներ, ծնողներ, մեծ հայրեր ու մեծ մայրեր, յատուկ պատկեր մը տալով այս մարաթոնին:

Երկրորդ տարին ըլլալով՝ ձեռնարկին ներկայացումը կա-

տարեց հռչակաւոր իսպանակ Գառնան, որ «համով-հոտով» կատակներով զբաղեցուց բոլորը:

Նախապատրաստական աշխատանքներէ ետք, մասնակիցները պատրաստուեցան մարաթոնին ազդանշանին եւ շարուեցան մուտքին առջեւ, իրենց շապիկներով կազմելով հսկայ եռագոյն մը, ուր կարմիրը, կապոյտն ու նարնջագոյնը անման պատկեր մը պարզեցին:

Առաջնութիւնը շահողը 8 քիլոմետրնոց ճամբան կտրեց գրեթէ 30 վայրկեանէն: Մրցանակներ յանձնուեցան ո՛չ միայն սովորական մարզիկներուն, այլ նաեւ՝ մարաթոնին մասնակցող հաշմանդամներուն:

Մրցանակները յանձնեցին Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Մելիքեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեան, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարուիւն Յովհաննէսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Տանիէլ Սապաքտանեան եւ վարչական այլ անդամներ:


Ձեռնարկի վերջաւորութեան, «Լոս Արմենիոս» նուագախումբը ներկայա-



ցուց իր վերջին խտասալիկին՝ «Ովկիանոս»ի եղանակները, մեծապես խանդավառելով բոլորը:

Հարկ է նշել Հ.Մ.Ը.Մ.ի անդամներուն, բարեկամներուն եւ վարչականներուն աջակցութիւնը, որոնք «Քլուպ տէ Բորէտորէս» կազմակերպութեան համագործակցութեամբ, ամէն ճիգ ի գործ դրին այս նախաձեռնութեան յաջողութեան համար: Աշխատանքները սկիզբ առին տարուան առաջին ամիսներէն, կազմակերպելով ձեռնարկին բոլոր մանրամասնութիւնները: Սակայն կարելոր է նշել, որ ո՛չ միայն հայ համայնքը արձագանգեց այս նախաձեռնութեան, այլ նաեւ՝ ընդհանուր առմամբ մարաթոնի վարժ մարզիկներ, որոնք վերջին հաշուով ընդառաջեցին «Արմենիա կը վազէ» գաղափարին:

Այս առիթով, պէտք է շնորհակալ ըլլալ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան եւ Ազգ. Առաջնորդարանին՝ իրենց հովանաւորութեան համար, ինչպէս նաեւ բոլոր մասնակցողներուն, հովանաւորներուն եւ բոլոր անոնց,






որոնք իրենց օժանդակութեամբ օգտակար եղան այս ձեռնարկին յաջողութեան:

Այժմէն արդէն սկսած են 2013 թուականի «Արմենիա կը վազէ» մարաթոնին նախապատրաստական աշխատանքները, ուղղուած նոյնպէս հայերու եւ ոչ-հայերու: Այս ձեւով համայն աշխարհին

ցոյց տալու համար, թէ ունինք յիշողութիւն, թէ կը ցանկանանք հաւասարութիւն, թէ կը պայքարինք արդար հարցի մը համար, եւ թէ երբեք պիտի չզիջինք: 2013-ին՝ քալելով, վազելով կամ, պարզապէս՝ մասնակցելով, ի նպաստ հաւասարութեան եւ յիշողութեան:

Ոչ ոք կրնայ բացակայիլ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.-«ՖՐԱՆՍ»Ի 28-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ՝ ՔՈՅՐ ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

Հ.Մ.Ը.Մ.-ի կրտսերագոյն կամ փոքր մասնաճիւղերէն մէկը՝ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ը արդէն դարձած է 35 տարեկան:

35 տարի, պատմութեան համար երիտասարդ, աշխատանքի ճամբուն վրայ՝ դժուարին ու խոչընդոտներով լեցուն, բայց Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքին համար՝ յաղթահարելի ու կենարար:

1977-ին, քանի մը «խենթ»եր կը հաւատային գործին ծանրութեան, կը գիտակցէին նաեւ անոր կարեւորութեան, երբ հիմը կը դնէին Հ.Մ.Ը.Մ.-ի նոր մասնաճիւղի մը, որ կոչուեցաւ իր երկրի

անունով՝ Հ.Մ.Ը.Մ. - «Ֆրանս»:

Հիմադրման առաջին միաւորը կազմեց անպայմանօրէն սկաուտութիւնը, որովհետեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր աւելը կը ստանայ սկաուտութենէն, որովհետեւ սկաուտը է՝ նաեւ ապագայ մարզիկը, առաջնորդը, կառավարողը, վարչականը:

Այսօր, 35 տարի ետք, միայն կարելի է «սկաուտական» բարեւոյ, սկաուտական խոստումին հաւատարիմ արարքով ողջունել այդ հաւատաւորներու մեծ գործը եւ խոստանալ շարունակել այն, որ սկիզբ առած է ու փոխանցման ճամբուն մէջ դրուած:

2012-ը նաեւ յատկանշական այլ թուական մըն է: Հայ սկաուտութեան



100-ամեակ: Երբ լուսաւոր աշխարհը կը մօտենար նոր գաղափարի մը, հայ ժողովուրդի գիտակից գաւակները անդրադառնալով անոր կարեւորութեան եւ վեհ գաղափարներուն, անմիջապէս կ'որդեգրէին զայն, յարմարեցնելով իրենց ազգային պահանջներուն, եւ ծնունդ կ'առնէր հայ սկաուտութիւնը:

Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի սկաուտները իրենց մասնաճիւղին հիմնադրութեան 35-ամեակն ու հայ ըսկաուտութեան 100-ամեակը տօնախմբեցին քոյր մասնաճիւղերու սկաուտներու հետ, որու արդիւնք՝ տարեկան 28-րդ բանակումին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.-ի Երուսաղէմի եւ Իրանի «Նայիրի» եւ «Արարատ» միութիւններէն քոյր-եղբայրներ՝ «յառաջ, յառաջ եւ միշտ յառաջ» երթալու վճռակամութեամբ, միասնաբար, ձեռք-ձեռքի...:

Բանակումը տեղի ունեցաւ 5-13 Յուլիս 2012-ին, Փարիզէն մէկ ժամ հեռավորութեամբ, Ժամպոլիի Փրանսական սկաուտութեան բանակավայրէն ներս:

Բանակողներու թիւը 56 էր, 6 տարեկան գայլիկէն մինչեւ փորձառու խումբապետներ, որոնք յանձնառութեամբ

վարեցին բանակումը, զայն հասցնելով իր արժանի յաճողութեան:

Բանակումին ծրագիրը հարուստ էր սկաուտական եւ ազգային նիւթերով:

Բանակումին ընթացքին արի-արեւոյշները այցելեցին Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադիր անդամներէն Գրիգոր Յակոբեանի շիրիմը եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին այդ մեծ հայուն եւ Հ.Մ.Ը.Մ.-ականին:

Անոնք ստացան նաեւ կաթողիկոսական Պատուիրակ, Ֆրանսայի Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեանի այցը բանակավայր: Սրբազան հայրը բացօթեայ պատարագ մատուցեց եւ բանակավայրն ու բանակողները օրհնեց:

Կիրակի, 8 Յուլիսին, բանակավայրը բաց էր ծնողներուն համար: Սկաուտական «Այցելութեան օր»ն էր: Թէեւ նախօրէի անձրեւը չէր քաջալերեր տունէն դուրս ելլելու, սակայն ծնողներ, բարեկամներ թէ Հ.Մ.Ը.Մ.-ի համակիրներ փութացած էին բանակավայր:

Համադամ ուսեյիքներն ու խորովածի կրակը, մատուցուած Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութեան կողմէ, ջերմացուցին միջնորդար:


Օրուան հիմնական բաժինը կը հանդիսանային սկաուտական արարողութիւնն ու խորոյկը:

Այս տարուան պատուոյ հիւրերու շարքին էին Նորվան Արք. Զաքարեան, Հայաստանի դեսպան Վիգէն Զիթէճեան, Արտակ Մ. Վրդ., ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեւեան:

Սկաուտական տողանցքէն եւ փոխանցումներէն ետք, կատարուեցաւ դրօշակի արարողութիւն, Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի շեփոխութեամբ ընկերակցութեամբ:

Իրենց շնորհակալական խօսքերն ու յուշանուէրները փոխանցեցին Երուսաղէմի խմբապետ եղբ. Յարութ Պաղամեան, Իրանի «Նայիրի» միութեան խմբապետ եղբ. Անտրէ Յովսէփեան եւ





կը եւ թէ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»-ի 35-ամեակը:

Եղբայրը յիշեցուց, թէ Հ.Մ.Ը.Մ.-ը Ցեղասպանութենէն ընդամէնը հինգ տարի ետք հասաւ որբերու օգնութեան, ինչպէս նաեւ գործեց Հայաստանի Ա. Հանրապետութեան սահմաններէն ներս: Իսկ 1991-ի անկախութենէն ետք, ան վերադարձաւ Հայաստան, ուր իր ըսկառուտներուն թիւը այսօր կը հաշուէ շուրջ 1200 հոգի:

Իսկ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ը, 35 տարի առաջ ճամբայ ելած, իր աշխատանքով, բայց մա-

Իրանի «Արարատ» միութեան խմբապետ եղբ. Հարմիկ Նաւասարդեան:

Այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»-ի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեան փոխանցեց վարչութեան խօսքը, անդրադառնալով հայ սկաուտութեան 100-ամեակին եւ միութեան 35-ամեայ տարեդարձներուն: Եղբայրը բացատրեց, թէ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»-ի վարչութիւնը այս առիթով որոշած է պատուոյ Վկայեալ կարգով պատուել իր մասնաճիւղի նախկին խմբապետները:

35 տարուան ընթացքին միութիւնը ունեցած է հինգ խմբապետներ, ներկայի գործող խմբապետէն՝ եղբ. Պօղոս Մահպուկեանէն բացի, յաջորդաբար՝ եղբայրներ Հրայր Տէր Գրիգորեան, Արմէն Մնացականեան, Նարեկ Արթինեան, Արա Մատէնեան եւ քոյր Արթինէ Շմաւոն:

Այդ պահուն ներկայ քոյր Արթինէ Շմաւոնի եւ եղբ. Նարեկ Արթինեանի, վարչական եղբայրներու կողմէ փոխանցուեցաւ համապատասխան վկայագիրը:

Իրենց սրտի խօսքերով ելոյթ ունեցան պատուոյ բոլոր հրաւիրեալները:

Առաջին հերթին Ֆրանսայի մօտ Հայաստանի դեսպան Վիգէն Զիթէճեան խօսեցաւ հայ երիտասարդութեան դերին կարեւորութեան մասին, ըսելով թէ երիտասարդութիւնը կը խորհրդանշէ

ապագան: Ան խրախուսեց հայ երիտասարդութիւնը երթալու հայրենիք, որուն դռները բաց են ու ան պատրաստ է օգելու իր զաւակներուն: Ան եզրակացուց, թէ՛ «որքան հզօր ըլլայ մեր երկիրը, ուժը կ'ունենանք հասնելու արդարութեան», իսկ երիտասարդութեան պէտք է հոգ տանիլ ու պահպանել, որովհետեւ ան է ապագան:

Պարէտ Ծ. Վրդ., որ հիւրաբար կը գտնուէր շրջան, իր բարեմաղթութիւնները ուղղելով նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.-ը այն միութիւնն է, որ քով-քովի կը բերէ երիտասարդներ, ան կը կերտէ ամուր մարդը, հայը, տիեզերական քաղաքացին: Ան խօսքը ուղղելով բանակողներուն նշեց, թէ «երբ շարունակէք մնալ եւ քաջալերել այս միութիւնը, ուրիշներ եւս պիտի շարունակեն ձեր ճամբան»:

Հ.Մ.Ը.Մ.-ի կեդրոնական վարչութեան անունով ելոյթ ունեցաւ Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեռեան: Եղբայրը շեշտեց, թէ «դարձեալ Ֆրանսայի մէջ եւ տեղ մը այսօր Հ.Մ.Ը.Մ.-ը կրկին իրականացուց իր ցանկութիւններէն մէկը, կազմել՝ Հայաստան մը»:

Ան նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտները այսօր ձեռք-ձեռքի, կամքի ուժով ու գիտակցելով իրենց առաքելութեան, հոս են, տարբեր շրջաններէ եկած մասնաճիւղերու ընկերակցութեամբ, տօնախմբելու թէ՛ հայ սկաուտութեան 100-ամեա-

նաւանդ կամքի ուժով այսօր հասած է այն հանգրուանին, որ ունի 250 անդամ, մեծ թիւով համակիրներ եւ կը վայելէ մանաւանդ գաղութին յարգանքը:

Նորվան Արք. Զաքարեանի «Պահպանիչ»-ով վերջ գտաւ արարողութեան պաշտօնական մասը:

Կարգը հասած էր «կենդանի» բաժնին, ուր կրակին շուրջ հաւաքուած սկաուտները պիտի փոխանցէին իրենց սկաուտական առօրեան:

Խարոյկին բոցերը գրաւեցին նաեւ ներկաները: Իւրաքանչիւր պատուիրակութիւն՝ Երուսաղէմ, Իրան թէ Ֆրանսա, ներկայացուցին տարբեր ծրագիրներ՝ երգ, ասմունք, գաւեշտ, բուրգ ու մարզական խաղեր եւ անշուշտ՝ կանչ, կատակ ու ժպիտ: Մէկուկէս ժամ, եւ պարզապէս քանի մը վայրկեանի նման:

Այդ տղաքը շուրջ տասը օր գեղեցիկ ժամեր անցուցին միասնաբար, զօրացան իրարմով ու մանաւանդ իրականացուցին բանակումին նշանաբանը՝ «Յաջողինք՝ կամքի ուժով»:

Նման հաւաքներ պատահութիւն կը ստեղծեն վստահութեան ներշնչման ու կը սերտացնեն կապերը, որուն իրականացման համար ոչ մէկ ճիգ կը խնայէ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»-ի վարչութիւնը:

Արդ, ինչպէս չհաւատալ խումբի ուժին ու խանդավառութեան, եւ այս բոլորը գուտ հայկականութեամբ ու հայերէնով, Հ.Մ.Ը.Մ.-ի ոգիին յար ու նման:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾԱՏՈՒՐԵԱՆԸ

Յակոբ Քէշիշեան
ՊԵՅՐՈՒԹ

18 Յունիսին, խոր ցաւով հողին յանձնեցինք մարմինը Հ.Մ.Ը.Մ.ական վաստակաւոր եղբոր մը՝ Յովհաննէս Ծատուրեանին, որ միութեան մէջ ունեցած է աւելի քան 60 տարիներու գործունէութիւն:

Եղբ. Յովհաննէս Ծատուրեան փոքր տարիքէն մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ին՝ իր առաջին քայլերը առնելով սկաուտական մարզին մէջ, մասնակցելով սկաուտական հաւաքներու եւ բանակումներու, ապա՝ եղած է մարզիկ, մարզիչ, հեծելարշաւի յանձնախումբի անդամ, Պէյրուսի մասնաճիւղի վարչական, ապա ատենապետ, հեծելարշաւի Ֆետերասիոնի փոխ նախագահ, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչութեան անդամ:

Եղբ. Յովհաննէս եղած է օրինակելի եւ տիպար մարզիկ, լուռ ու մունջ գործունէութիւն տանող վարչական եղբայր:

Ինչպէս Հ.Մ.Ը.Մ.ի, Լիբանանի հեծելարշաւի Ֆետերասիոնի արխիւները եւս կը վկայեն Ծատուրեան եղբայրներուն՝ Վարդգէսին եւ Յովհաննէսին 1950-ական եւ 1960-ական թուականներուն լիբանանեան հեծելարշաւի մարզին մէջ ունեցած սխրագործութիւններուն, ղերին եւ ներգրումին մասին, ինչ որ ինքնաբերաբար կը պարտադրէ, որ Հ.Մ.Ը.Մ.ի անունը ոսկեայ տառերով արձանագրուի Լիբանանի հեծելարշաւի պատմութեան էջերուն մէջ:


Հեծիկին հետ եղբ. Յովհաննէս Ծատուրեանին հեքիաթը կը սկսի 1951-ին, երբ սիրողական մարզիկներու յատկացուած առաջին պաշտօնական մրցումին՝ Պէյրուս-Տամուր-Պէյրուս մայրուղիին վրայ ան կը նուաճէ առաջին դիրքը:

1952-ին, այսինքն ճիշդ 60 տարի առաջ, ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի խումբին՝ արձանագրելով փայլուն արդիւնքներ ու վեր պահելով միութեան դրօշը լիբանանեան եւ արաբական մրցավազքերու վրայ:

Եղբ. Ծատուրեան 1956-ին Լիբանանը կը ներկայացնէ Եգիպտոսի մէջ տեղի ունեցած մրցաշարքի մը, իսկ 1957-ի միջարաբական խաղերուն ան կը հանդիսանայ 5-րդ. դիրք մը, զոր լիբանանցի ոչ մէկ հեծելանորդ կարողացած է նուաճել ցարդ:

1960-ին եղբ. Յովհաննէս կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի խումբերու մարզիչի պաշտօնը՝ հոն եւս արձանագրելով

1959. Վարդգէս եւ Յովհաննէս Ծատուրեան եղբայրներ:



նոր մրցանիշ մը, երբ Հ.Մ.Ը.Մ. յաջորդական հինգ տարիներ կը տիրանայ Լիբանանի հեծելարշաւի խմբային ախոյեանութեան՝ 1961, 1962, 1963, 1964 եւ 1965 տարիներուն: Մրցանիշ մը, որ ցարդ մնայ անխորտակելի:

Իր եւ եղբոր՝ Վարդգէսին ցուցմունքներով ու անոնց մարզումներուն հսկողութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ական Հրաչ եւ Վաչէ Ծատուրեան եղբայրները Լիբանանը կը ներկայացնեն ողիմպիական խաղերուն:

Իբրեւ մարզիկ եւ մարզիչ իր արձանագրած փայլուն արդիւնքներէն ետք, եղբ. Յովհաննէս Ծատուրեան կը նուիրուի վարչական գործունէութեան, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի հեծելարշաւի Ֆետերասիոնին մէջ՝ դառնալով Ֆետերասիոնի փոխ նախագահ, իսկ 2006-ին կը ստանայ Լիբանանի հեծելարշաւի Ֆետերասիոնի պատուոյ անդամի տիտղոսը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչութիւնը գինք կը պատուէ «Ծառայութեան» շքանշանով, իսկ 2008-ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ձեռամբ ան կը ստանայ «Արժանեաց» շքանշան:

Եղբ. Յովհաննէս Ծատուրեանի մահով հեծելարշաւի աշխարհէն ներս Հ.Մ.Ը.Մ.ական տիտանի մը պատմութիւնն է, որ կ'աւարտի՝ առանձին ձգելով մեզ, սուգի մատնելով Լիբանանի հեծելարշաւի մարզը ընդհանրապէս ու իր ընտանեկան պարագաները, հարազատները, բարեկամներն ու իր պատկանած միութիւնը մասնաւորապէս:

Սիրելի՛ եղբայր Յովհաննէս,
Դուն, որ եղար տիպար մարզիկ եւ միութենական գործունեայ անդամ՝ ըլլայ միութեանդ, ըլլայ Լիբանանի հեծելարշաւի Ֆետերասիոնին մէջ, քաջ գիտցիր, որ աւանդը փոխանցուած է ապահով ձեռքերու, որոնք կը քայլեն նախորդներուն գծած ուղիով, հաւատքով ու տեսիլքով:
Վարձքդ կատար, սիրելի՛ եղբայր:
Հողը թեթեւ գայ վրդդ:

ԱՆՇՐՋԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾԱՏՈՒՐԵԱՆ




photo by

**Ուատիի Ապտելնուր
(Լիբանանի հեծելարչաւի ֆետերասիոնի
նախկին ընդհանուր քարտուղար)
ՊԵՅՐՈՒԹ**

Յովհաննէս Ծատուրեանը ճանչցայ իբրեւ հեծելարչաւի սիրահար, երիտասարդ տարիքէն մինչեւ ծերութիւնը: Ան կը խօսէր հեծելարչաւի պատմութեան, մրցումներուն եւ ախոյեաններուն մասին՝ սկսելով իր օրերէն, անցնելով իր եղբօր՝ Վարդգէսին ժամանակաշրջանէն, հասնելով մինչեւ Հրաչին եւ Վաչէին սերունդները:

Երբ Յովհաննէսը ստանձեց Լիբանանի հեծելարչաւի ֆետերասիոնի փոխ նախագահի պաշտօնը, երբեք չհեռացաւ ճամբաներէն, այլ ընդհակառակը՝ ան բազմապատկեց մրցումները եւ հսկեց Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարչաւի խումբերուն, մարզեց ազգային խումբերը, ընկերակցեցաւ անոնց, նոյնիսկ երբ ճամբաները փակ էին ու պատանդը՝ զինեալներուն ու անցարգելներուն:

Այսուհանդերձ, ան շարունակեց կազմակերպել մրցումներ եւ ախոյեանութիւններ, եւ երբեք չզլացաւ թիկունք կանգնիլ ազգային խումբերուն եւ ուզեց, որ Լիբանանը միշտ

ու միշտ մասնակցի միջազգային մրցումներուն:

Լիբանանի հեծելարչաւի ֆետերասիոնը, նախագահութեամբ լուսահոգի Թանիոս Միրի, բաւական փորձառութիւն ձեռք ձգեց Յովհաննէսի վարչական տաղանդէն, թեքնիք գիտելիքներէն եւ հարցերը լուծելու ունակութենէն, նկատի ունենալով անոր աւելի քան կէս դարու նուաճումները, յաղթանակները, որոնց մասին բոլորը կը վկայեն: Լիբանանի ախոյեանութիւններու մասնակցութիւն, արաբական մրցումներու ու յատկապէս Լիբանանի շրջավազքի յաղթանակներ, որոնց վրայ կու գան աւելնալու Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն արձանագրած իրերայաջորդ մրցանիշները անհատական թէ խմբային մակարդակներուն վրայ:


Յովհաննէս Ծատուրեանը կը մնայ Լիբանանի ու Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարչաւի առաջնորդն ու նահապետը, որ կարողացաւ զարգացնել այս մարզը եւ յայտնաբերեց ախոյեաններ՝ տասնեակ տարիներով:

Յովհաննէս Ծատուրեան, անշրջելի ճշմարտութիւն եւ ու պիտի մնաս սիրելիներուդ համար:

Համբերութիւն՝ ընտանիքիդ ու ընկերներուդ:

Անցած ճանապարհդ պիտի վերածուի սերունդներու դարբնոցի եւ քու վառած ջահդ պիտի մնայ անմար:

ԵՂԲ. ՊՕՂՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ



**Յ.Պ.Վ.
ՊԵՅՐՈՒԹ**

Երկու կցկտուր խօսք եղբ. Պօղոս Յովհաննէսեանի յիշատակին, որ մեզմէ յաւելտ բաժնուեցաւ տարի մը առաջ՝ 9 Յունիս 2011-ին, հեռաւոր Ֆրանսայի Վալանս քաղաքին մէջ:

Իրեն հետ մեր ծանօթութիւնը եւ ապա գործակցութիւնը կը սկսի 1950-ական թուականներէն, երբ մարզական եռուն կեանք մը կար Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի նախկին ակումբին մէջ, փինկ-փոնկի մարզական ճիւղին շուրջ:

Ան մարզիչ էր բառին իսկական առումով եւ իր շուրջ հաւաքուած էին տասնեակէ մը աւելի երիտասարդներ:

Սկիզբը պարզապէս փինկ-փոնկ խաղացող մըն էր, աւելի ուշ ամբողջութեամբ նուիրուեցաւ ախոյեաններ պատրաստելու առաքելութեան: Եւ իրաւամբ, իր աշակերտներէն շատերը դարձան լաւ խաղացողներ եւ ախոյեաններ:

Համեստ մարդ մըն էր եղբ. Պօղոսը եւ անցեալ տարի լուիկ-մնջիկ ալ հեռացաւ այս աշխարհէն:

Այդ օրերուն եւ անհանգիստ էի ու ամբողջ երեք ամիս չկարողացայ անդրադառնալ իր կատարած գործին: Բայց նա եւ ափսո՛ս, որ իր աշակերտներէն ոչ մէկը անդրադարձաւ իր մասին: Միայն «Մարզիկ» գուժեց անոր մահը եւ մահագրութեամբ մը ծանօթացուց զայն նոր սերունդին [«Մարզիկ», թիւ 346-348, էջ 36-37-«Մ.»]:



Համեստ մարդու ճակատագիր:

Եթէ այսօր լիբանանեան երկնակամարին վրայ փինկ-փոնկի փայլուն ախոյեաններ ունինք, ատիկա արդիւնքն է այն տքնաջան աշխատանքին, զոր եղբ. Պօղոս Յովհաննէսեանը տարաւ ամբողջ քառասուն տարի:

Բարերախտաբար, իր գործը այսօր կը շարունակէ իր փայլուն աշակերտներէն եղբ. Րաֆֆի Մունջօղլեանը, որ երկար տարիներ եղաւ Լիբանանի ախոյեան: Շնորհակալութիւն իր կատարած գործին:

Սիրելի՛ եղբ. Պօղոս, կեանքը եւ պայմանները ստիպեցին քեզ, որ լքես Լիբանանը եւ քու սիրած միութիւնդ՝ աննման Հ.Մ.Ը.Մ.ը:

Ունինք միտիթարութիւն մը սակայն, որ գործդ կը շարունակուի՝ շնորհիւ քու պատրաստած աշակերտներուդ:

Եթէ անոնք մոռցան քեզ, ներէ: Անոնց կողմէ ես շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի՝ մահուանդ տարելիցին:

Հողը թեթեւ գայ վրայդ, սիրելի եւ աննման եղբ. Պօղոս:

ՎԱՀԱԳՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԵՒՍ ՄԱՀԱՑԱԾ

Յաւով կը տեղեկանանք, թէ Պօղոս Յովհաննէսեանի երէց եղբայրը՝ Վահագն Յովհաննէսեան, նոյնպէս փինկ-փոնկի երկարամեայ ախոյեան, իր մահկանացուն կնքած է Յունաստանի մէջ:

Եղբ. Վահագն Յովհաննէսեան եղած է փինկ-փոնկի միջազգային մարզիկ: Ան Լիբանանի ախոյեան հանդիսացած է 1948-ին, 1950-ին, 1951-ին, 1952-ին, 1953-ին եւ 1965-ին: Միաժամանակ, 1952-1963, ան մաս կազմած է Լիբանանի խմբային ախոյեանութեան տիրացած Հ.Մ.Ը.Մ.ի տղոց խումբին (Պօղոս Յովհաննէսեան, Յարութիւն Գուլումճեան, Երուանդ Թերզեան, Սարգիս Գէորգեան, Շահէ Թիւթիւնճեան, Հայկ Աշգարեան, Զարեհ Պաղտասարեան...): 1965-ին, Նազիկ Յովհաննէսեանի հետ ան տիրացած է Լիբանանի երկսեռ գոյզի ախոյեանութեան:

Եղբ. Վահագն Լիբանանի ազգային խումբին հետ արաբական երկիրներու ախոյեանութիւններու մասնակցած է 1955-ին եւ 1956-ին, իսկ միջազգային մրցաշարքերու՝ 1954-ին, 1955-ին, 1957-ին եւ 1959-ին:

Եղբ. Վահագն մահացած է 31 Յունուար 2012-ին:

with the complements of

Restaurant Al-Mayass

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ**

28 դար առաջ, հին Յունաստանի մէջ սկսան կազմակերպուիլ մրցումներ, ուր մարզիկները կը մրցէին ուժով, ճարպիկութեամբ եւ արագաշարժութեամբ: Մեծագոյն մրցումները կը կազմակերպուէին Ողիմպիա քաղաքին մէջ եւ ի պատիւ այս քաղաքին կը կրէին Ողիմպիական խաղեր անուանումը:

Խաղերը կը կազմակերպուէին չորս տարին անգամ մը եւ կը նուիրուէին Զեւս աստուծոյ: Ողիմպիական խաղերուն պաշտօնական սկիզբը կը նկատուի Ք.Ա. 776 թուականը, երբ յոյներ սկսան թուարկել խաղերը եւ արձանագրել յաղթողներուն անունները:

Քրիստոնէութիւնը ընդունելէ ետք, Ողիմպիական խաղերը դադար առին Հռոմի կայսեր Թէոդորոս առաջինի հրամանով: Ողիմպիական խաղերու երկրորդ ծնունդը տեղի ունեցաւ 1896 թուականին, Յունաստանի մայրաքաղաք Աթէնքի մէջ, Փրանսացի հասարակական գործիչ Փիէր Ծը Բուպերթէնի նախաձեռնութեամբ: Այդ օրէն ի վեր, չորս տարին անգամ մը, տարբեր երկրի մէջ կը կատարուին Ողիմպիական խաղերը: 1924 թուականէն ի վեր չորս տարին անգամ կը կը կատարուին նաեւ ձմեռնային ողիմպիական խաղերը:

ՀԱՅԵՐԸ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ


Հին ժամանակներէն հայերը մասնակցած են ողիմպիական խաղերուն: 281 թուականին տեղի ունեցած

խաղերուն ըմբշամարտիկներու մրցումներուն յաղթած է Հայոց Տրդատ երրորդ Արշակունի թագաւորը:

Ողիմպիական թանգարանին մէջ մինչեւ այսօր կը պահպան-



ւի յաղթողներու մարմարէ անուանատախտակը, ուր նշուած է, որ հայոց Վարազդատ Արշակունի թագաւորը 394



թուականի Ողիմպիական խաղերուն բռնցքամարտի մրցումներուն յաղթած է: 1998 թուականին կանգնեցուցաւ Վարազդատ թագաւորին մարմարէ կիսանդրին:

Այս տարի, Լոնտոնի ողիմպիական խաղերուն, Հայաստանի Հանրապետութենէն մասնակցեցան 24 մարզիկներ, որոնցմէ մէկը տիրացաւ արծաթ մետալի, իսկ երկուքը՝ պրոնզէ:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ Է...

Այս տարի Լոնտոնի ողիմպիականին արձանագրուեցաւ հետաքրքրական երկու դէպք:

Ողիմպիական խաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Օսքար Փիսթորիուս,




որուն ոտքերը անդամահատուած էին տասնմէկ ամսու եղած շրջանին, պայքարեցաւ տղամարդոց 400 մետր վազքի մրցումներուն՝ ողիմպիական ոսկի մետալի համար: Ան իր մասնակցութեան իրաւունքը ձեռք բերաւ դատարանի որոշումով:

Ողիմպիական խաղերու պատմութեան մէջ այս տարի հետաքրքրական էր նաեւ կուոր Մարիալի մասնակցութիւնը: Մարիալ որեւէ երկրի հպատակութիւն չունէր: Ան փախստական էր Սուտանէն եւ հաստատուած էր Միացեալ Նահանգներ: Ողիմպիական կոմիտէն աննախընթաց որոշումով մը արտօնեց անոր մասնակցիլ խաղերուն որպէս անկախ մարզիկ: Եթէ ան յաղթէր պիտի հնչէր ողիմպիական քայլերգը:





ԾԻԱԾԱՆ



Ամէն անգամ երբ տաք, արեւոտ օր ըլլայ եւ միաժամանակ անձրեւ գայ, անձրեւը դադրելէն ետք մենք կը նշմարենք հսկայական կամարի նման ծիածանը՝ կազմուած եօթը գոյնէ՝ կարմիր, նարնջագոյն, դեղին, կանաչ, բաց կապոյտ, գոց կապոյտ, մանիշակագոյն:

Ի՞նչ է ծիածանը:

Ինչո՞ւ օդին մէջ նման հրաշք կը յառաջանայ: Ասոր պատճառը արեգակի լոյսն է, որ կարծես ճերմակ է, բայց իրականին մէջ կազմուած է եօթը գոյնէ: Երբ արեւուն

ճառագայթները օդին մէջէն կ'անցնին, մենք զանոնք կը տեսնենք որպէս ճերմակ լոյս: Բայց ահա ճանապարհին կը յայտնուի անձեւի կաթիլ մը եւ ճառագայթները կը բեկուրին տարբեր անկիւններով: Ճերմակ ճառագայթը կը բաժնուի բազում ճառագայթներու եւ երկինքին վերեւ կը շողայ ծիածանը:

Հայերս ծիածանը կոչած ենք նաեւ Ծիրանի գօտի, տիրկան կամ տիրական գօտի՝ կապուած գիրի եւ դրականութեան աստուած Տիրի անուան հետ:

ՀԱՆԵԼՈՒԿ




Ո՞վ է, ի՞նչ է:
Ան կը ծնի հող-
րէն ու ջուրէն:
Մեզի կը ժպտի
հորիզոնէն:

Ունի աղեղ եօթնալար:

Կը կամրջէ դաշտ ու սար:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Թիւ 358-ի հանելուկին պատասխանն էր արծիւ):

Այս եգակի երեւոյթը, որ ծիածանանման ամպ կը կոչեն, նկատուած է Ֆլորիտայի մէջ:



ԿՐՆԱՆՔ ՑԱՆ ՄԷՋ ԾԻԱԾԱՆ ՈՒՆԵՆԱԼ

Անշուշտ, որ կրնանք ունենալ:

Մեզի անհրաժեշտ է միջին չափի կաթսայ մը, հայելի մը եւ ամէնէն կարելորդ՝ արեւու ճառագայթներ:

Նախ եւ առաջ կաթսան ջուրով կը լեցնենք եւ կը դրնենք արեւուն ճառագայթներուն տակ: Յետոյ, հայելին կը դնենք ջուրին մէջ եւ այնպէս կը շարժենք, որ արեւուն ճառագայթները իյնան հայելին վրայ: Յետոյ, հայելին այնպէս կը շարժենք, որ շողերը իյնան պատին վրայ: Այսպէս, կը յաջողինք պատին վրայ տեսնել ծիածանի գոյները:

Պատճառը այն է, որ արեւուն ճառագայթներն իրենց մէջ կը պարունակեն ծիածանի բոլոր գոյները, զորս մենք չենք տեսներ: Բայց երբ ճառագայթները կ'իյնան ջուրին մէջ, գոյները իրարմէ կը հեռանան եւ մենք կը յաջողինք զանոնք տեսնել: Այսպէս ալ կը յառաջանայ ծիածանը երկնակամարին վրայ: Արեւուն ճառագայթները կ'անցնին անձրեւի կաթիլներուն մէջէն եւ կը յայտնուի վառ ու պայծառ ծիածանը:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

	9		5		7			
2			6	9	7			4
		6				5		
	4			7			2	
6	1		2		5		4	8
	3			8			6	
		4				2		
3			8	4	2			1
	2			6			5	

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 բառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկոււմով իւրաքանչիւր բառակուսի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 բառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ բառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

2	8	5	1	3	4	9	6	7
1	9	7	6	8	2	3	4	5
4	3	6	5	9	7	8	1	2
3	7	4	2	5	1	6	8	9
5	2	9	4	6	8	7	3	1
8	6	1	9	7	3	5	2	4
9	1	3	8	2	5	4	7	6
6	4	8	7	1	9	2	5	3
7	5	2	3	4	6	1	9	8

Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. «Էն. Պի. Էյ.»ի կազմերէն:
2. Փայտփոր թռչուն - Մարդակ:
3. Հայրենի երգչուհի:
4. Յատկութիւն - Ընտիր - Դրկից գիրեր:
5. Բռնի ու ձրի աշխատանք - Օրինակելի:
6. Սրունքի պահպանակ - Տառի մը դրացիները:
7. Մաքրողական տերեւներով բոյս - Վայրի էջ:
8. Լեցուն - Օձի տեսակ:
9. Կոնարեր ծառ - Թշնամի - Երբեմն Կապուտան ծով կոչուած լիճ:
10. Գեղամ Սարեանի երկերէն - Սարսափ - Փութով:
11. Սերոբ Աղբիւրի քաջարի կողակիցը - Էմիլ Զոլայի երկերէն:
12. Ընդհատ հառաչել - Ծանրութեան միաւոր - Թիւ:
13. Իբր դեղ գործածուող բուսական հիւթ մը - Սարդ:
14. Հայոց Ժ. ամիսը - Կրծող փոքր կենդանի:
15. Նշանակութիւն - Հնձուած ցորենի դէզ - Իրերայաջորդ գիրեր:
16. Միսով սնանող - Կոստան Զարեանի երկերէն՝ «... պսակը»:
17. Դրկից տառեր - Զորի - Այբուբենէն - Որովհետեւ:
18. Հոլովակերտ մասնիկ - Կղպանքի ծակ - Ճաշէն առաջ կամ ետք հրամցուած թեթեւ ուտելիք:
19. Դ. դարու հերետիկոս - Շնագայլ - Մոհամէտի փեսան:
20. Ժողով - Անձ - Տարուան բաժանումներէն:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Մրցանիչերու «Կինէս» գիրքին յիշատակութեան արժանացած՝ լիբանանահայ միջազգային նախկին մրցավար:
2. Թաղիք - Արդարեւ - Տարի - Էջ թռչուն:
3. Նախանձիլ - Եպիսկոպոսական դաւազան - Բազմութիւն-Ֆրանսական քաղաք:
4. Արիւնալից բորբոքուն պալար - Տարուան լաւագոյն Ֆութպոլիստը՝ 2009-ին, 2010-ին եւ 2011-ին - Ածականակերտ մասնիկ:
5. Արական օտար անուն - Նուագարանի լար - Հայ աշխարհակալ:
6. Զուրո՛ւմ մաքրէ - Հինտու կրակի աստուածը - Համադասական շողկապ:
7. Ականջ - Բերք - Ուղտափուշ:
8. Բերան փոթոթող համ - Մեծագործութիւն - Այբուբենէն - 1070:
9. Ալբոլ պարունակող - Կրկնուած ձայնաւորներ - Ստացական ածական - Տառի մը դրացիները - Արաբական լրատու գործակալութիւն մը:
10. Սուրիոյ օդափոխութեան վայրերէն - Արական անուն - Յովհաննէս Թումանեանի երկերէն - Այբուբենէն:
11. Արդար - Կրկնուած բաղաձայններ - Յանդուզն:
12. Դիցանոյշ - 2011 տարուան հայրենի լաւագոյն մարզիկը:
13. Անլուծելի - Ճակաճան - Որոգայթ:
14. Յաւի ճիշ - Զրային փոխադրամիջոց - Դիւրավառ:
15. Ունայն - Ասեղնագործի փայտէ շրջանակ - աչքի ծիածան: նիկ - Կղպանքի ծակ - Ճաշէն առաջ կամ ետք հրամցուած թեթեւ ուտելիք:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1															
2															
3															
4															
5	↓														
6			↖								↖				
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1		Օ	Ր	Լ	Ա	Ն	Տ	Օ	Մ	Է	Ծ	Ի	Ք		
2		Դ	Ա	Ռ	Ն	Ա	Լ		Ա	Ր	Ի	Տ	Ա		
3			Մ	Է	Գ		Ո	Ք	Ս	Ի	Տ		Ջ		
4			Ք	Օ	Ղ	Ե	Ն	Ջ	Ա	Կ		Հ	Ա		
5	Ա	Ն	Կ	Ի	Ր	Թ		Ա	Ր		Դ	Ե	Ր		
6	Կ	Ո	Տ	Ր	Է	Ի		Կ		Ք	Ե	Ջ	Ի		
7		Վ	Ա	Ս	Ն					Օ	Ղ				
8	Հ	Ա	Կ	Ա		Ք			Կ	Ղ	Ի				
9	Ա	Լ		Ն	Ա	Ր	Ե	Կ	Ա	Ց	Ի				
10	Մ	Ի	Ս	Ի	Ս	Ի	Փ	Ի		Ա		Ն			
11	Լ	Ս	Ե	Լ		Ս	Է	Ր	Ո	Ն	Ս	Ի	Ր		Հ
12	Է		Կ	Ի	Ր	Թ		Ծ	Մ		Ա	Ք	Ա	Ց	Ի
13	Թ	Օ		Ո	Ր	Ի	Ջ		Ն	Օ		Հ	Մ	Ը	Մ
14		Թ	Ե	Ի		Ա	Գ	Ի		Ա	Ն	Ի			Ն
15	Ջ	Ա	Ր	Մ	Ա	Ն	Ա	Լ		Մ	Ա	Տ	Ո	Ն	Ա
16	Ա	Ն	Ա	Ժ		Օ	Լ	Ի	Ն	Ա		Ֆ	Ր	Ի	Ք
17	Կ		Մ	Ի	Ս		Ի	Կ		Մ	Ղ	Է	Շ	Ա	
18	Ա	Մ	Ա	Ն	Ա	Կ		Ա	Փ		Ա	Լ	Ք		Ն
19	Տ	Ո	Կ	Ո	Ս		Ե	Մ		Ա	Ն	Տ	Ի	Պ	
20	Ի	Լ		Վ	Տ	Ի	Տ		Ի	Մ	Ա		Ս	Է	Գ

ԹԻՒ 200 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.-«ՖՐԱՆՍ»Ի
ՍԿԱՌԻՏՆԵՐ
ԿՈՄԻՏԱՍԻ
ՇՈՒՔԻՆ ՏԱԿ

